ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 սեպտեմբերի 2021թ. N 01-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 04-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)

որոշում է.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի լրացման ուղեցույցը հաստատելու մասին» N 04-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանից հանել «24-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերը:
2. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ա. ՓԱՇԻՆՅԱՆ

Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման

«Հավելված
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2020 թվականի նոյեմբերի 18-ի N 04-Լ որոշման

ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ, ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բովանդակություն

I. Ընդհանուր դրույթներ 2
II. Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի լրացման ուղեցույց.....6
III. Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի լրացման ուղեցույց.....47
IV. Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու հայտարարագրի լրացման ուղեցույց.....79
V. Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի՝ պաշտոնի ստանձնման/դադարեցման հայտարարագրի լրացման ուղեցույց.....112

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ առանձնահատկությունները.

1) Տարեկան հայտարարագրում գույքի վերաբերյալ տվյալները ներկայացվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ, իսկ հաշվետու ժամանակահատված է համարվում հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:

2) Պաշտոնի ստանձնման/դադարեցման հայտարարագրերում գույքի վերաբերյալ տվյալները ներկայացվում են պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ, իսկ հաշվետու ժամանակահատված է համարվում պաշտոնի ստանձնման/դադարեցման տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածը:

3) Տարեկան հայտարարագրում նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարագրված գույքը պետք է նույնական լինի տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ հայտարարագրվող գույքի հետ: Այն պարագայում, երբ հայտարարատուն պարզում է, որ նախորդիվ ներկայացված հայտարարագրերում առկա են անճշտություններ, Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04 –Ն որոշմամբ սահմանված կարգով դիմում է Հանձնաժողովին՝ դրանցում համապատասխան ճշտումներ կատարելու համար:

4) Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով, և չի հանդիսանում ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի կողմից որպես նվիրատվություն կամ ժառանգություն ստացած գույքը: Հայտարարագրման ենթակա գույքը (այդ թվում՝ անշարժ գույքը), որը ենթակա է պետական գրանցման և հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը, հայտարարագրում է այն ամուսինը, ում սեփականության իրավունքը գրանցված է տվյալ գույքի նկատմամբ (ում անվամբ գրանցված է գույքը), իսկ եթե գրանցված է ամուսիններից յուրաքանչյուրի իրավունքը, ապա հայտարարագրում է միայն հայտարարատու պաշտոնատար անձը՝ որպես համատեղ սեփականություն:

5) Ամուսինների միջև պետական գրանցում չպահանջող հայտարարագրման ենթակա գույքի շարժը (օրինակ՝ գումարի տրամադրումը, թանկարժեք նվերներ միմյանց տալը և այլն) ենթակա չէ հայտարարագրման:

6) Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրում արտացոլվում է հետևյալ կերպ.

ա) Կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց սեփական միջոցներից վճարվող կանխավճարը (օրինակ՝ անշարժ գույքի արժեքի 20%-ի չափով) հայտարարագրում նշվում է որպես կառուցապատողին տրված փոխառություն: Նման լրացման պարագայում հարկ է լրացուցիչ նշումներ դաշտում տալ համապատասխան բացատրություն:

բ) Կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց հիփոթեքային վարկի միջոցներից վճարվող գումարը (օրինակ՝ անշարժ գույքի արժեքի 80%-ը), այդ թվում՝ վարկի գումարը տրանշերով ստանալու դեպքում, հայտարարագրվում է միաժամանակ 2 բաժիններում՝ եկամուտներ բաժնում՝ որպես ստացված եկամուտ (վարկ) և «Հանձնած փոխառություններ» բաժնում՝ որպես տրված փոխառություն: Միաժամանակ, տվյալ վարկի մայր գումարի մնացորդը լրացվում է *Գ.1.2. բաժնում*

(Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ):

գ) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը հայտարարագրում արտացոլվում է որպես կառուցապատողին տրված փոխառության մարում և անշարժ գույքի ձեռքբերում: Անշարժ գույքի ձեռքբերումն արտացոլվում է «Անշարժ գույքը» բաժնում՝ կառուցապատողին վճարված անշարժ գույքի ընդհանուր արժեքի (100%-ի) չափով: Կառուցապատողին տրված փոխառության (20% + 80%) մարումն արտացոլվում է տարեկան հայտարարագրի «Հանձնած փոխառություններ» բաժնի տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարը դաշտում՝ կառուցապատողին տրված փոխառության գումարի տարեվերջի մնացորդը ցույց տալով զրո (մարված):

7) Տարաժամկետ վճարմամբ գույքի ձեռքբերման դեպքում գործարքի տվյալներն արտացոլվում են որպես համապատասխան գույքի ձեռքբերում՝ «Ձեռքբերման արժեքը» դաշտում նշելով գույքի ամբողջ արժեքը: Միաժամանակ, վաճառողին փաստացի չվճարված գումարի մնացորդը հայտարարագրվում է եկամուտների հայտարարագրման բաժնում՝ «Ստացված փոխառություններ (վարկեր)» տողում: Վարկային միջոցներով գույքի ձեռքբերման դեպքում գործարքի տվյալներն արտացոլվում են որպես համապատասխան գույքի ձեռքբերում՝ «Ձեռքբերման արժեքը» դաշտում նշելով գույքի ամբողջ արժեքը: Միաժամանակ, ստացված վարկի գումարը հայտարարագրվում է եկամուտների հայտարարագրման բաժնում՝ «Ստացված փոխառություններ (վարկեր)» տողում:

8) Գույքի ձեռքբերման դիմաց նախավճարի կամ կանխավճարի փաստացի վճարված գումարը հայտարարագրվում է «Հանձնած և վերադարձված փոխառություններ» բաժնում որպես հանձնած փոխառություն:

9) Համատեղ կամ բաժնային սեփականությամբ հայտարարատուին պատկանող գույքի ձեռքբերման գործարքները գրանցելիս՝ հայտարարատուն «Ձեռքբերման արժեքը» դաշտում նշում է գույքի միայն իրեն պատկանող մասի արժեքը, բացառությամբ ամուսինների համատեղ սեփականության առարկա հանդիսացող գույքի: Այս դեպքում որպես համատեղ սեփականություն հանդիսացող գույքի արժեք հայտարարագրվում է գործարքի ընդհանուր արժեքը (գինը), իսկ ամուսնու հայտարարագրում լրացուցիչ նշում գույքի ձեռք բերման մասին չի կատարվում:

10) «Նվիրատվություն» եղանակով օտարված գույքի «Օտարման արժեքը» դաշտում նշվում է զրո (0):

11) Պայմանագրով չկարգավորվելու դեպքում բնամթերային եկամուտներն արտացոլվում են ստացման տարում՝ այն ձեռք բերելու հնարավոր գնով: Հնարավոր կամ շուկայական գին է համարվում այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների համար կամ այն գինը, որով գույքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը համաձայն է վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը համաձայն է ձեռք բերել այդ գույքը: Այդ նպատակով կիրառելի են, մասնավորապես, առուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, խանութների, բորսաների, տոնավաճառների, շուկաների և այլն) գները, գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ համացանցի միջոցով ստացված տվյալները և այլն:

12) Փոխանակման գործարքները հայտարարագրվում են որպես համապատասխան գույքի օտարում և այլ գույքի ձեռքբերում՝ հիմք ընդունելով բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան

որոշված արժեքները: Միևնույն ժամանակ, «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում նշում է կատարվում փոխանակման գործարքի վերաբերյալ:

13) **Փաստացի տիրապետվող գույք է** համարվում այն անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը, թանկարժեք գույքը, որը

✓ սեփականության իրավունքով չի պատկանում հայտարարատուին: Այսինքն՝ անշարժ գույքի կամ տրանսպորտային միջոցի դեպքում գույքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով գրանցված չէ հայտարարատու անձի սեփականության իրավունքը և

✓ տվյալ գույքը հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվել կամ օգտագործվել է հայտարարատու անձի կողմից:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ գույքը փաստացի տիրապետելը չի ենթադրում գույքի տիրապետում բացառապես գույքն օգտագործելու միջոցով: Գույքը հնարավոր է նաև տիրապետել առանց այն փաստացի օգտագործելու: Այսինքն՝ գույքը տիրապետելու հասկացությունն իր մեջ ներառում է նաև այն դեպքերը, երբ անձը փաստացի չի օգտագործում տվյալ գույքը, օրինակ՝ բնակարանի կամ ամառանոցի դեպքում չի բնակվում այդ վայրում, տրանսպորտային միջոցի դեպքում փաստացի չի վարում այն, սակայն միջոցներ է ձեռնարկում գույքի պահպանման, վերականգնման, այն երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանելու համար, կատարում է գույքի հետ կապված ընթացիկ ծախսեր և այլն:

Որպես փաստացի տիրապետվող գույք հայտարարագրման ենթակա չէ հայտարարատու անձի փաստացի տիրապետման ներքո գտնվող այն անշարժ գույքը կամ տրանսպորտային միջոցը, որը հայտարարատու անձի տիրապետմանն է հանձնվել աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում:

Եթե փաստացի տիրապետվող (օգտագործվող) գույքի պարտադիր լրացման ենթակա որևէ տվյալ հիմնավոր պատճառներով հասանելի չէ, ապա տվյալ դաշտում նշվում է «Առկա չէ» և նույն դաշտում կամ Բ.7.«Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում նշվում է համապատասխան հիմնավորումը:

14) **Հայտարարագրման ենթակա է նաև այն գույքը**[1], որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, այսինքն՝ անշարժ գույքի կամ տրանսպորտային միջոցի դեպքում գույքի նկատմամբ գրանցված չէ հայտարարատու անձի սեփականության իրավունքը, այլ գրանցված է երրորդ անձի սեփականության իրավունքը, սակայն առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

✓ **գույքը ձեռք է բերվել հայտարարատուի անունից/օգտին**, այսինքն՝ գույքը փաստացի ձեռք է բերվել հայտարարատու անձի համար: Հայտարարատու անձը չհանդիսանալով գույքի սեփականատեր, այնուամենայնիվ ունի փաստացի հնարավորություն գույքի օգտագործման, պահպանման վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում **կամ**

✓ **գույքը ձեռք է բերվել հայտարարատուի հաշվին**, այսինքն՝ գույքը ձեռք է բերվել հայտարարատու անձի դրամական կամ այլ գույքային միջոցներով, վերջինիս հաշվին **կամ**

✓ **այդ գույքից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն**, այսինքն՝ թեև գույքի նկատմամբ հայտարարատու անձի սեփականության իրավունքը գրանցված չէ, սակայն տվյալ գույքից օգուտ՝ եկամտի կամ որևէ այլ ձևով, ստանում է հայտարարատու անձը: Օրինակ՝ այն դեպքում, երբ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի վարձակալության վճարը, որպես եկամուտ

---

1 Այս դեպքում հայտարարագրման ենթակա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերում նշված գույքը

ստանում է հայտարարատու անձը, վերջինս պարտավոր է հայտարարագրել այդ բնակարանը **կամ**

✓ **այդ գույքը փաստացի տնօրինում է հայտարարատուն**, այսինքն՝ հայտարարատու անձը գույքի ճակատագիրը որոշելու հարցում ունի վճռորոշ ազդեցություն: Թեև հայտարարատու անձը չի հանդիսանում գույքի սեփականատեր, սակայն հայտարարատու անձի անմիջական ազդեցությամբ է գույքի իրական սեփականատերը որոշում կայացնում այն վարձակալության հանձնելու, վաճառելու, նվիրելու և այլնի վերաբերյալ:

Այս բաժնում հայտարարագրման ենթակա չէ այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է հայտարարատու անձի ընտանիքի անդամին2 և վերջինս այդ գույքի վերաբերյալ տվյալները ներկայացրել է իր հայտարարագրում:

2. Հայտարարագրի էլեկտրոնային լրացման հաջորդականությունը հետևյալն է.

1) Էլեկտրոնային համակարգ մուտք գործելուց հետո հայտարարատու անձը նախ լրացնում է համակարգի առաջնային էջի վերևի աջ անկյունում տեղակայված «Անձնական տվյալներ» բաժինը: Նշված բաժին մուտք գործելիս բացվում է հայտարարատուի անձնական տվյալների էջը, որտեղ հայտարարատուն լրացնում կամ խմբագրում է իր անձնական տվյալները: Պաշտոնատար անձանց «Անձնական տվյալներ» բաժնում առկա է «Ընտանիքի կազմ» բաժինը, որտեղ պաշտոնատար անձը պարտավոր է լրացնել և պահպանել իր ընտանիքի բոլոր անդամների տվյալները՝ նշելով նրանց կարգավիճակը: Չափահաս անդամների դեպքում անհրաժեշտ է նաև նշել կոնտակտային տվյալներ: Յուրաքանչյուր հայտարարագրի լրացումից առաջ հայտարարատու պաշտոնատար անձը վերանայում է «Ընտանիքի կազմ» բաժնի տվյալները՝ ընտանիքի կազմում տեղի ունեցած փոփոխություններին համապատասխան:

2) Անձնական տվյալները լրացնելուց հետո «Գրասեղան» դաշտում հայտարարատուն ընտրում է այդ պահի դրությամբ լրացման ենթակա հայտարարագրի տեսակը, լրացնում համապատասխան տարեթիվը և սկսում լրացնել բուն հայտարարագիրը:

II. Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի լրացման ուղեցույց

Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի՝

1) «**Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները**» բաժնի ստորև նշված տվյալները լրացվում են3 տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

---

2 «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ: Համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը:

3 Այս բաժնում տվյալների մեծ մասը լրացվում է ինքնաշխատ կերպով:

– հայտարարատու պաշտոնատար անձի անունը, ազգանունը և հայրանունը՝ ըստ անձնագրի,
– ծննդյան օրը, ամիսը, տարին՝ ըստ անձնագրի,
– հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը,
– անձնագրային տվյալները,
– հաշվառման հասցեն,
– փաստացի բնակության հասցեն:

Եթե հայտարարատուի հաշվառման հասցեն նույնական է բնակության հասցեի հետ, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Այո» պատասխանը, որից հետո համակարգն ինքնաշխատ եղանակով կներբեռնի համապատասխան հասցեն «Հաշվառման հասցե» սյունակից: Եթե այն տարբեր է հաշվառման հասցեից, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Ոչ» պատասխանը, որից հետո մուտքագրի իր բնակության հասցեի տվյալները:

– պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը, որտեղ պաշտոն է զբաղեցնում,
– զբաղեցրած պաշտոնի անվանումը,
– պաշտոնն ստանձնելու/դադարեցնելու օրը, ամիսը, տարին (լրացվում է համակարգի կողմից ինքնաշխատ),
– էլեկտրոնային փոստի հասցե:

Առավել նպատակահարմար է նշել անձնական և մշտադիտարկվող էլեկտրոնային հասցեն, քանի որ այն հանդիսանում է հայտարարատուին ծանուցելու պաշտոնական միջոց: Այս դաշտում նշվում է մեկ էլեկտրոնային փոստի հասցե:

– «Բջջային հեռախոսահամար» դաշտում առավել նպատակահարմար է նշել անձնական բջջային հեռախոսահամարը:
– «Ֆիքսված հեռախոսահամար» դաշտում նշվում է ֆիքսված հեռախոսահամարը:
– Հայտարարագրի ներկայացման օրը, ամիսը, տարին լրացվում են ինքնաշխատ՝ համակարգի կողմից:

2) «**Ա2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները**» բաժնում լրացվում են տվյալ տարվա ընթացքում հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ հանդիսացած բոլոր անձանց տվյալները: Այս բաժնի տվյալները ինքնաշխատ ձևով բեռնվում են՝ համակարգի «Անձնական տվյալներ» բաժնում տեղադրված «Ընտանիքի կազմ» կոճակի միջոցով մուտք գործելով նախապես լրացված տվյալներից: Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ: Սույն բաժնում լրացվում են՝

– կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ (օրինակ՝ «Անչափահաս զավակ» ընտրության դեպքում՝ դուստր, որդի, «Համատեղ բնակվող անձ»-ի դեպքում՝ եղբայր, ամուսնու մայր և այլն, «Ամուսին» ընտրության դեպքում՝ կին կամ ամուսին),
– անունը, ազգանունը և հայրանունը՝ ըստ անձնագրի,
– ընտանիքի անդամի ծննդյան օրը, ամիսը, տարին՝ ըստ անձնագրի,

– ընտանիքի անդամի անձնագրի տվյալները (տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ): Ընտանիքի անչափահաս անդամի դեպքում լրացվում են նրա ծննդյան վկայականի կամ անձնագրի (առկայության դեպքում) տվյալները,

– հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը,

– քաղաքացիությունը,

– հաշվառման հասցեն,

– փաստացի բնակության հասցեն: Եթե հայտարարատուի հաշվառման հասցեն նույնական է բնակության հասցեի հետ, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Այո» պատասխանը, որից հետո համակարգը ինքնաշխատ եղանակով կներբեռնի համապատասխան հասցեն «Հաշվառման հասցե» սյունակից: Եթե այն տարբեր է հաշվառման հասցեից, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Ոչ» պատասխանը, որից հետո մուտքագրի իր փաստացի բնակության հասցեի տվյալները տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ,

– պաշտոնը կամ աշխատանքային գործունեությունը (զբաղմունքը),

– առկայության դեպքում գործատու(ներ)ի անվանումը:

3) «**Ա3. Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները**» բաժնում անձնագրային տվյալներին համապատասխան լրացվում են հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված, համատեղ չբնակվող հետևյալ անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին.

– ծնող,

– չափահաս զավակ,

– եղբայր,

– քույր,

– ամուսնու ծնող,

– ամուսնու զավակ,

– ամուսնու եղբայր,

– ամուսնու քույր:

4) **«Բ.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով ձեռքբերած անշարժ գույքի արժեքը հայտարարագրվում է նաև եկամուտների հայտարարագրման բաժնում (Գ.1.1.) որպես բնամթերային եկամուտ՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրում արտացոլվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում սահմանված կարգով:

– Հայտարարատուի կողմից կառուցված և տվյալ տարում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման դեպքում՝ «Ձեռքբերման արժեքը»

դաշտում նշվում է շինարարության նախահաշվային փաստաթղթերում նշված արժեքը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ շինարարության փաստացի արժեքը:

– «Բ.1.1. Տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույքը» բաժնում հայտարարագրվում են միայն այն անշարժ գույքի վերաբերյալ տվյալները, որն առկա է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ: Այն անշարժ գույքը, որը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ պետական գրանցում դեռևս չի ստացել (կառուցման ընթացքում գտնվող, ձեռքբերված, բայց պետական գրանցում չստացած), ենթակա չէ հայտարարագրման տվյալ բաժնում:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող անշարժ գույքը: Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում 90 օր կամ ավելի գումարային ժամկետով բնակվել է (վարձակալական հիմունքներով կամ անհատույց) իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում4 կամ, թեև անձը փաստացի չի բնակվում իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում, սակայն բնակարանը գտնվում է նրա տիրապետման ներքո և նա կատարում է տվյալ բնակարանի պահպանմանն ուղղված գործողություններ, օրինակ, վճարում է կոմունալ վճարները, կատարում է ընթացիկ վերանորոգում և այլն:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ անշարժ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

5) **«Բ.1.1. Տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույքը»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– «**Անշարժ գույքի տեսակը**» դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույքը հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Սեփականության իրավունքի տեսակը»** դաշտում լրացվում է «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի անձինք, և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը: Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ, և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– **«Հայտարարատուի բաժինը»** դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

---

4 Տվյալ գույքը ենթակա չէ հայտարարագրման, եթե սեփականության իրավունքով պատկանում է հայտարարատու անձի ընտանիքի անդամին և վերջինս այդ գույքի վերաբերյալ տվյալները ներկայացրել է իր հայտարարագրում:

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը իսկ ֆիզիկական անձի դեպքում ՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, գործընկեր և այլն:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– **«Անշարժ գույքը ձեռք բերելու ամսաթիվը»** դաշտում նշվում է գույքի պետական գրանցման ամսաթիվը: Կառուցվող անշարժ գույքի դեպքում (այդ թվում՝ կառուցապատողից անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) նույնպես նշվում է անշարժ գույքի պետական գրանցման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տողն ընտրելու դեպքում հարկավոր է տալ բացատրություն «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը: Եթե անշարժ գույքի միավորի (օրինակ՝ հողամասի) մի մասն օտարվել է հաշվետու ժամանակահատվածում, ընտրվում է «Մասնակի» տարբերակը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

6) «**Բ.1.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված անշարժ գույքը**» բաժնի՝

– «**Հայտարարատուի տվյալները**» ենթաբաժնում նշվում է տվյալ տարվա ընթացքում անշարժ գույք ձեռք բերած հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– «**Անշարժ գույքի տեսակը**» դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե ձեռք է բերվել հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– «**Սեփականության իրավունքի տեսակը**» դաշտում լրացվում է՝ «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա

սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի անձինք և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, եթե տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը: Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ, և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– «**Հայտարարատուի բաժինը**» դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– «**Անշարժ գույքի հաշվառման համարը**» դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը, իսկ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– «**Անշարժ գույքը ձեռք բերելու ամսաթիվը**» դաշտում նշվում է գույքի ձեռքբերման ամսաթիվը: Կառուցվող անշարժ գույքի դեպքում (այդ թվում՝ կառուցապատողից անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) նշվում է անշարժ գույքի պետական գրանցման ամսաթիվը:

– «**Ձեռքբերման եղանակը**» դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տողն ընտրելու դեպքում հարկավոր է տալ բացատրություն «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

– «**Նկարագրություն**» դաշտում նշվում է այլ եղանակով անշարժ գույքի ձեռքբերման մանրամասները:

– «**Ձեռքբերման արժեքը**» դաշտում լրացվում է գործարքի գինը: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտում լրացվում է «0», միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում որպես բնամթերային ձևով ստացված եկամուտ հայտարարագրվում է գույքի արժեքը՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– «**Ձեռքբերման արժույթը**» դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– «**Չափման միավոր**» դաշտում, որպես կանոն, ընտրվում է «մ²» չափման միավորը:

– «**Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն**» դաշտում լրացվում են գույքի ձեռքբերման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը: Եթե անշարժ գույքի միավորի (օրինակ՝ հողամասի) մի մասն օտարվել է հաշվետու ժամանակահատվածում, ընտրվում է «Մասնակի» տարբերակը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

7) **«Բ.1.2. Տվյալ տարվա ընթացքում օտարված անշարժ գույքը»** բաժնի՝

– «**Հայտարարատուի տվյալները**» ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– «**Անշարժ գույքի տեսակը**» դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե օտարվել է հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– «**Սեփականության իրավունքի տեսակը**» դաշտում լրացվում է՝ «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի անձինք և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, եթե տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը: Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ, և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– «**Հայտարարատուի բաժինը**» դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» դաշտում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– «**Անշարժ գույքի հաշվառման համարը**» դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը, իսկ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– «**Օտարման ամսաթիվը**» դաշտում նշվում է անշարժ գույքի օտարման ամսաթիվը:

– «**Օտարման եղանակը**» դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– «**Օտարման արժեքը**» դաշտում լրացվում է գործարքի գինը: Անհատույց օտարման դեպքում այս դաշտում նշվում է զրո (0):

– «**Օտարման արժույթը**» դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի օտարման գործարքի արժույթը:

– «**Օտարված անշարժ գույքի մակերեսը**» դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– «**Չափման միավոր**» դաշտում, որպես կանոն, ընտրվում է «մ²» չափման միավորը:

– «**Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն**» դաշտում գույքի օտարման գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում լրացվում են անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս անվանումը, ինչպես նաև լրացվում է գործարքի մյուս կողմի հասցեն:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

8) **«Բ.1.3. Տվյալ տարվա վերջում առկա անշարժ գույքը»** բաժինը լրացվում է ինքնաշխատ:

9) **«Բ.1.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե օտարվել է հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի, և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– «**Չափման միավոր**» դաշտում, որպես կանոն, ընտրվում է «մ²» չափման միավորը:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը, իսկ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի սեփականատիրոջ (սեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

10) **«Բ.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով տվյալ տարվա ընթացքում ձեռքբերված տրանսպորտի միջոցի արժեքը հայտարարագրվում է նաև եկամուտների հայտարարագրման բաժնում (Գ.1.) որպես բնամթերային եկամուտ՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– Տրանսպորտի միջոցի ձեռքբերման դեպքում տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի վճարված կանխավճարի (նախավճարի) մնացորդը հայտարարագրվում է «Հանձնած և վերադարձված փոխառություններ» բաժնում:

– Տարաժամկետ վճարմամբ տրանսպորտի միջոցի ձեռքբերման դեպքում տվյալներն արտացոլվում են այս բաժնում՝ որպես տվյալ տարում տրանսպորտի միջոցի ձեռքբերում: Միաժամանակ, փաստացի չվճարված գումարը հայտարարագրվում է եկամուտների հայտարարագրման բաժնում՝ որպես **«Ստացված փոխառություն (վարկ)»**:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված տրանսպորտի միջոցի): Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում առնվազն 90 օր վարել է ավտոմեքենա, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և ավտոմեքենան փոխանցել է օգտագործման հայտարարատուին:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն տրանսպորտի միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտի միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

11) «**Բ.2.1. Տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի միջոցը**» բաժնի՝

– «**Հայտարարատուի տվյալները**» ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն

այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառված են կամ ենթակա են հաշվառման:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման ամսաթիվը: Ձեռքբերման ամսաթիվ է համարվում ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ տրանսպորտային միջոցի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:

– **«Մակնիշը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին՝ ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

12) **«Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված տրանսպորտի միջոցը»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարում ձեռքբերված տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառված են կամ ենթակա են հաշվառման:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում նշվում է այլ եղանակով տրանսպորտային միջոցի ձեռքբերման մանրամասները:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման ամսաթիվը: Ձեռքբերման ամսաթիվ է համարվում ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է գործարքի գինը: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտում լրացվում է «0», միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում որպես բնամթերային ձևով ստացված եկամուտ հայտարարագրվում է գույքի արժեքը՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան: ՀՀ տարածքից դուրս (այդ թվում՝ արտասահմանյան աճուրդներից) ձեռքբերված տրանսպորտային միջոցների դեպքում ձեռքբերման արժեքը ներառում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման օրվանից մինչև ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը կատարված բոլոր ծախսերը (ձեռքբերման, տեղափոխման, մաքսազերծման, ապահովագրության և այլն) և կարող է ներկայացվել տրանսպորտային միջոցի ձեռքբերման արժույթով կամ ՀՀ դրամով:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման գործարքի արժույթը: ՀՀ տարածքից դուրս (այդ թվում՝ արտասահմանյան աճուրդներից) ձեռքբերված տրանսպորտային միջոցի

դեպքում, երբ մինչև ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը կատարվել են ծախսեր տարբեր արժույթներով (ձեռքբերման, տեղափոխման, մաքսազերծման, ապահովագրության և այլն), դրա արժեքը կարող է ներկայացվել տրանսպորտային միջոցի ձեռքբերման արժույթով կամ ՀՀ դրամով:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն՝ վերջինիս առկայության դեպքում:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ տրանսպորտային միջոցի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:

– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

13) **«Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում օտարված տրանսպորտի միջոցը»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարում օտարված տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառված են կամ ենթակա են հաշվառման:

– **«Օտարման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է օտարման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում նշվում է այլ եղանակով տրանսպորտային միջոցի օտարման մանրամասները:

– **«Օտարման ամսաթիվը»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի օտարման ամսաթիվը:

– **«Օտարման արժեքը»** դաշտում լրացվում է գործարքի գինը: Անհատույց օտարման դեպքում այս դաշտում նշվում է զրո (0):

– **«Օտարման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտային միջոցի օտարման գործարքի արժույթը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

14) **«Բ.2.3. Տվյալ տարվա վերջում առկա տրանսպորտի միջոցը»** բաժինը լրացվում է ինքնաշխատ:

15) **«Բ.2.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը, այն տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտային միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

16) **«Բ.3. ԱՐԺԵԹՂԹԵՐ ԵՎ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների արժեքը տվյալ տարվա սկզբում և տվյալ տարվա վերջում հաշվարկվում է ձեռքբերման արժեքով: Օրինակ՝ հայտարարատուն տարիներ առաջ 100,000 պմ-ով ձեռք է բերել «X» ընկերության 100% բաժնեմասը: Տարվա ընթացքում հայտարարատուն 800,000 պմ-ով վաճառում է բաժնեմասերի 70%-ը: Տվյալ դեպքում տարեկան հայտարարագրում որպես տարեսկզբի մնացորդ պետք է հայտարարագրվի «X» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը՝ 100,000 պմ արժեքով, իսկ որպես տարեվերջի մնացորդ կհայտարարագրվի մնացորդային 30% բաժնեմասը՝ 30,000 պմ ձեռքբերման արժեքով: Միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում կհայտարարագրվի բաժնեմասերի 70%-ի վաճառքից ստացված եկամուտը (վաճառքի գումարը)՝ 800,000 պմ արժեքով:

– Ներդրումային ֆոնդերի փայերը հայտարարագրվում են ընդհանուր կարգով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը չեն հայտարարագրվում:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն արժեթուղթը (բաժնեմասը), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով գրանցված է այլ անձի անունով, սակայն առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի անունից/օգտին, այսինքն՝ արժեթուղթը փաստացի ձեռք է բերվել հայտարարատու անձի համար: Հայտարարատու անձը չհանդիսանալով արժեթղթի սեփականատեր, այնուամենայնիվ ունի փաստացի հնարավորություն վերջինիս հետ կապված որոշումներ կայացնելու հարցում **կամ**

✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի հաշվին, այսինքն՝ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատու անձի դրամական կամ այլ գույքային միջոցներով, վերջինիս հաշվին **կամ**

✓ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն, այսինքն՝ թեև արժեթուղթը գրանցված է երրորդ անձի անունով, սակայն տվյալ արժեթղթից օգուտներ՝ շահաբաժնի կամ որևէ այլ ձևով, ստանում է հայտարարատու անձը **կամ**

✓ այդ արժեթուղթը փաստացի տնօրինում է հայտարարատուն, այսինքն՝ հայտարարատու անձը գույքի ճակատագիրը որոշելու հարցում ունի վճռորոշ ազդեցություն: Հայտարարատու անձն է որոշում կայացնում, օրինակ, արժեթուղթը վաճառելու կամ նվիրելու վերաբերյալ, թեև չի հանդիսանում արժեթղթի գրանցված սեփականատեր:

– Հայտարարատուի բաժնեմասնակցությամբ ընկերության գույքի, ինչպես նաև ընկերության դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները ենթակա չեն հայտարարագրման: Հայտարարագրման ենթակա չեն նաև այն կազմակերպության գույքի, ինչպես նաև դրա դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ կազմակերպությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

17) «**Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ**» բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ.

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայաբաժին):

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է հանդիսանում հայտարարատուն, նրա ընտանիքի անչափահաս անդամը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

– **«Ձեռքբերման ամսաթիվ»** դաշտում լրացվում է արժեթղթի ձեռքբերման ամսաթիվը: Եթե տվյալ տարվա ընթացքում տվյալ ընկերության բաժնային արժեթղթեր կամ բաժնեմաս ձեռք է բերվել մեկից ավելի անգամ, ապա բոլոր ձեռքբերումները հայտարարագրվում են առանձին:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը:

– **«Նկարագրություն»** դաշտը լրացվում է, եթե «Ձեռքբերման եղանակը» դաշտում ընտրվել է ձեռքբերման «Այլ» եղանակը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում գույքի օտարման գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում լրացվում են անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս անվանումը, ինչպես նաև լրացվում է գործարքի մյուս կողմի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Տվյալ տարվա սկզբում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատու պաշտոնատար անձին, նրա անչափահաս զավակին կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Տվյալ տարվա վերջում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Տվյալ տարվա վերջում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատու պաշտոնատար անձին, նրա անչափահաս զավակին կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

18) **«Բ.3.2. Բաժնային արժեթուղթ կամ այլ ներդրում, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ արժեթղթից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայաբաժին):

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է

հանդիսանում հայտարարատուն, նրա ընտանիքի անչափահաս անդամը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Տվյալ տարվա սկզբում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատու պաշտոնատար անձին, նրա անչափահաս զավակին կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Տվյալ տարվա վերջում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Տվյալ տարվա վերջում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատու պաշտոնատար անձին, նրա անչափահաս զավակին կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– **«Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

19) **«Բ.3.3. Պարտքային և այլ արժեթղթեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է պարտքային և այլ արժեթղթերի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Արժեթղթի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային կամ այլ արժեթղթի տեսակը: «Այլ արժեթուղթ» տողն ընտրելու դեպքում հայտնված «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում նկարագրվում է այլ պարտքային արժեթղթի տեսակը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժեթղթի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում նշվում է արժեթղթի ձեռքբերման ամսաթիվը:

– **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտում լրացվում է «Արժեթղթի տեսակը» և (կամ) «Ձեռք բերելու եղանակը» դաշտերում «Այլ» տողը ընտրելու դեպքում: Այս դեպքում լրացվում է այլ արժեթղթի և (կամ) ձեռքբերման այլ եղանակի տեսակը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժեթղթի արժեքը՝ ձեռքբերման գնով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ արժեթղթի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա արժեթղթի արժեքը՝ ձեռքբերման գնով:

20) **«Բ.3.4. Պարտքային կամ այլ արժեթուղթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Արժեթղթի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային և այլ արժեթղթերի տեսակը:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժեթղթի արժեքը ձեռքբերման գնով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ արժեթղթի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա արժեթղթի արժեքը՝ ձեռքբերման գնով:

– **«Պարտքային և այլ արժեթղթերի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է պարտքային և այլ արժեթղթերի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

21) **«Բ.4. ՀԱՆՁՆՎԱԾ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Հայտարարագրվում են հաշվետու տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարատուի հանձնած փոխառությունները և ներդրված բանկային ավանդների գումարները, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում հանձնված և վերադարձված փոխառությունները: Սույն հավելվածի առումով բանկային ավանդ է համարվում բանկի հետ ժամկետային ավանդի պայմանագրի շրջանակներում որոշակի ժամկետով ներդրված ավանդը, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով սահմանված տոկոսներ:

– Ցպահանջ ավանդները, խնայողական հաշիվների մնացորդները, առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին արտացոլվում են «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև մինչև անշարժ գույքի պետական գրանցումը կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց վճարված գումարների մնացորդը (այդ թվում՝ վարկային միջոցներից)՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից հետո այս փոխառության մնացորդը մարվում է (զրոյանում է):

– Այս բաժնում լրացվում են նաև գույքի (անշարժ գույք, տրանսպորտի միջոց, արժեթղթեր և այլ ներդրումներ, թանկարժեք գույք) ձեռքբերման պայմանագրի շրջանակներում փաստացի վճարված կանխավճարի և նախավճարի գումարները, որոնք առկա են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– Այս բաժնում հայտարարագրվում է այն փոխառությունը կամ ավանդը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ փոխառությունից կամ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

22) **«Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ»** բաժնի՝

– **«Պարտատիրոջ կարգավիճակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Հայտարարատու պարտատիրոջ տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է փոխատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Պարտապանի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են պարտապան հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է երկիրը, որի քաղաքացի է հանդիսանում պարտապանը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է պարտապանի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է փոխատուի (պարտատիրոջ) և փոխառուի (պարտապանի) միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ ձեռքբերվող բնակարանի կառուցապատող, եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում լրացվում է տրված փոխառության տոկոսադրույքը, իսկ անտոկոս փոխառության (այդ թվում՝ տրված կանխավճարի, նախավճարի, տարաժամկետ վճարման պայմանով գույքի վաճառքի դեպքում լրացվող փոխառության և այլ) դեպքում՝ զրո:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ հունվարի 1-ի դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Փոխառության արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված և վերադարձված փոխառությունների արժույթը:

– **«Տարվա ընթացքում հանձնված փոխառության գումարը»** դաշտում լրացվում են տվյալ տարվա ընթացքում տրված փոխառության գումարները (այդ թվում՝ կառուցապատողին կամ գույք վաճառողին տրված կանխավճարի և նախավճարի գումարները): Այս դաշտը կարող է չլրացվել, եթե հանձնված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարը»** դաշտում լրացվում են տվյալ տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարները (այդ թվում՝ կառուցվող գույքի պետական գրանցման դեպքում կառուցապատողին վճարված գումարի մարումը, տարաժամկետ վճարման պայմանով վաճառած գույքի արժեքի կամ դրա մի մասի վճարումը): Այս դաշտը կարող է չլրացվել, եթե վերադարձված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտում նշվում են այն փոխառությունների տվյալները, որոնք վերաբերվում են գույքի նախնական առուվաճառքի պայմանագրերով փաստացի վճարված գումարներին կամ գույքի ձեռքբերման պայմանագրերի շրջանակներում հիփոթեքային պայմանագրերով փաստացի վճարված գումարներին, եթե հայտարարատուի սեփականության իրավունքը դեռևս չի գրանցվել, ինչպես նաև այլ տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության:

– **«Տվյալ տարվա վերջում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա փոխառության պարտքի գումարը:

Այս բաժնում լրացվում են նաև այն փոխառությունները, որոնք վերաբերվում են գույքի նախնական առուվաճառքի պայմանագրերով փաստացի վճարված գումարներին կամ գույքի ձեռքբերման պայմանագրերի շրջանակներում հիփոթեքային պայմանագրերով փաստացի վճարված գումարներին, եթե հայտարարատուի սեփականության իրավունքը չի գրանցվել:

23) **«Բ.4.2. Հանձնված կամ վերադարձված փոխառություն, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ փոխառությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատու պարտատիրոջ տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է փոխատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է պարտատիրոջ և պարտապանի միջև կնքված պայմանագրում նշված տոկոսադրույքը:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ հունվարի 1-ի դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Փոխառության արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված և վերադարձված փոխառությունների արժույթը:

– **«Տարվա ընթացքում հանձնված փոխառության գումարը»** դաշտը կարող է չլրացվել, եթե հանձնված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարը»** դաշտը կարող է չլրացվել, եթե վերադարձված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա փոխառության պարտքի գումարը:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

24) **«Բ.4.3. Բանկային ավանդներ»** բաժնի՝

– **«Պարտատիրոջ կարգավիճակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Պարտատիրոջ տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է ավանդատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Բանկի անվանումը (ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում)»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը): Լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում

– **«Տվյալ տարվա սկզբում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Ավանդի արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ավանդի գումարը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

25) **«Բ.4.4. Բանկային ավանդ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Բանկի անվանումը (ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում)»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը):

– **«Տվյալ տարվա սկզբում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Ավանդի արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ավանդի գումարը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

26) **«Բ.5. ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻՑ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻՑ ԱՎԵԼԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԸ (ԹԱՆԿԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ)»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Թանկարժեք գույք է համարվում նախորդ բաժիններում չներառված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը, օրինակ՝ թանկարժեք զարդ, կահույք, արվեստի գործ, ոսկու ձուլակտորներ և այլն: Ընդ որում, չորս միլիոն դրամի շեմը վերաբերվում է տվյալ թանկարժեք գույքի միավորին կամ կոմպլեկտին, այլ ոչ թե՝ թանկարժեք գույքի տեսակին: Օրինակ, եթե հայտարարատու անձի բոլոր ոսկյա զարդերի ընդհանուր արժեքը կազմում է 6 միլիոն ՀՀ դրամ, սակայն դրանցից յուրաքանչյուրի արժեքը չի գերազանցում 4 միլիոն ՀՀ դրամը, ոսկյա զարդերը ենթակա չեն հայտարարագրման:

– Թանկարժեք գույքի արժեքը որոշվում է դրա ձեռքբերման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում նկարագրված բնամթերային եկամուտների արժեքի որոշման մեթոդով:

– **Այս բաժնում հայտարարագրվում է** նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող թանկարժեք գույքը: Օրինակ՝ հայտարարատուն տարվա ընթացքում առնվազն 90 օր օգտագործել և (կամ) տիրապետել է թանկարժեք ժամացույց, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և այդ թանկարժեք գույքը փոխանցել է օգտագործման (տիրապետման) հայտարարատուին, կամ հայտարարատուի տանը կախված է հայտնի նկարչի թանկարժեք կտավ, որը պատկանում է այլ անձի:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ թանկարժեք գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

27) **«Բ.5.1. Տվյալ տարվա սկզբում առկա՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է թանկարժեք գույքի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրությունը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրությունը»** դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման տարին»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի ձեռքբերման տարին:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը՝ ձեռքբերման գնով: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտը լրացվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի ձեռքբերման արժույթը:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տարեվերջին տվյալ թանկարժեք գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:

28) **«Բ.5.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է թանկարժեք գույք ձեռքբերած հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի ձեռքբերման օրը, ամիսը, տարին:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը՝ ձեռքբերման գնով: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտում լրացվում է «0», միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում որպես բնամթերային ձևով ստացված եկամուտ հայտարարագրվում է գույքի արժեքը՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի ձեռքբերման արժույթը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են թանկարժեք գույքի ձեռքբերման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տարեվերջին տվյալ թանկարժեք գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:

29) **«Բ.5.2. Տվյալ տարվա ընթացքում օտարված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է թանկարժեք գույք օտարող հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Օտարման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է օտարման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է օտարման եղանակը:

– **«Օտարման ամսաթիվը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի օտարման օրը, ամիսը, տարին:

– **«Օտարման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի օտարման արժեքը: Անհատույց օտարման դեպքում այս դաշտում նշվում է զրո (0):

– **«Օտարման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի օտարման արժույթը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են թանկարժեք գույքի օտարման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

30) **«Բ.5.3. Տվյալ տարվա վերջում առկա՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժինը լրացվում է ինքնաշխատ:

31) **«Բ.5.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող թանկարժեք գույք կամ այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Գինը (արժեքը)»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է թանկարժեք գույքի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

32) **«Բ.6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Սույն բաժնում հայտարարագրվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարատուի՝

- ՀՀ և արտասահմանյան բանկերում գտնվող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցները (ընթացիկ և խնայողական հաշիվների մնացորդները (բացառությամբ ժամկետային ավանդների), առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին և այլն),
- Էլեկտրոնային հաշիվներին (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO) առկա դրամական միջոցները,
- կրիպտոարժույթը,
- կանխիկ դրամական միջոցները,

– ՀՀ բանկերում միևնույն արժույթով առկա դրամական միջոցները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ հաշիվների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի դրամական միջոցների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց **«Նկարագրություն»** դաշտում պետք է նշի, թե տվյալ հաշվին որքան գումար է առկա:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև այն դրամական միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ դրամական միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

33) **«Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)»** բաժնի՝

– **«Սեփականատիրոջ տվյալները»** ենթաբաժնում նշվում է բանկային հաշիվների սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Բանկի անվանումը (ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում)»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը):

– **«Գումարի չափը տվյալ տարվա սկզբում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս

դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Գումարի չափը տվյալ տարվա վերջում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

34) **«Բ.6.2. «Բանկային հաշվի մնացորդ (բացառությամբ ավանդի), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ դրանից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Բանկի անվանումը (ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում)»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը):

– **«Գումարի չափը տվյալ տարվա սկզբում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Գումարի չափը տվյալ տարվա վերջում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Բանկային հաշիվների մնացորդների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բանկային հաշիվների

մնացորդների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

35) **«Բ.6.3. Էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է էլեկտրոնային հաշիվների և կրիպտոարժույթի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն):

– **«Տվյալ տարվա սկզբում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

36) **«Բ.6.4. «Էլեկտրոնային հաշիվ կամ կրիպտոարժույթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ հաշվից կամ կրիպտոարժույթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն):

– **«Տվյալ տարվա սկզբում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն «Դրամական միջոցի տեսակը» դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Էլեկտրոնային հաշիվների և կրիպտոարժույթի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

37) **«Բ.6.5. Կանխիկ դրամ»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է կանխիկ դրամի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա կանխիկ գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»**

տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

38) **«Կանխիկ դրամ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ կանխիկ դրամից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն»** բաժնի

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա կանխիկ գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Կանխիկ դրամի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

39) **«Բ.7. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատուի անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի և այլ ներդրումների, հանձնված և վերադարձված փոխառությունների, բանկային ավանդների, թանկարժեք գույքի և դրամական միջոցների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

40) **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»** բաժնում եկամուտները հայտարարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Այս բաժնում գրանցվում են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում տվյալ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները:

– Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և պարտադիր այլ վճարների:

– Եկամուտներն արտացոլվում են ըստ դրանց փաստացի ստացման: Ընդ որում՝ սույն հայտարարագրի իմաստով եկամուտ են համարվում նաև ստացված վարկերն ու փոխառությունները, գույքի վաճառքից ստացված գումարը, բնամթերային եկամուտները, ապահովագրական հատուցումները, ինչպես նաև անուղղակի ստացված եկամուտները:

– Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում մեկ կամ մի քանի աղբյուրից ստացված տվյալ տեսակի եկամուտը կամ նույն տեսակի եկամուտների հանրագումարը (նվիրատվություն, շահում, քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտ և այլն), որի արժեքը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, բացառությամբ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների: Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները կարող են հայտարարագրվել նույն աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների հետ՝ հանրագումարով:

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով ձեռքբերված գույքը հայտարարագրվում է այս բաժնում՝ որպես եկամուտ:

– Հայտարարատուի բանկային հաշիվներին հասանելի չօգտագործված վարկային գծի և օվերդրաֆթի գումարները եկամուտ չեն համարվում, քանի դեռ չեն օգտագործվել: Որպես տվյալ տարվա եկամուտ հայտարարագրվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարը:

– Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրվում է սույն հավելվածի **«Ընդհանուր դրույթներ»**-ում նկարագրված կարգով:

– Բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հայտարարատուի կողմից ստացված հիփոթեքային վարկի սպասարկման համար ՀՀ Հարկային օրենսգրքի 160 հոդվածի համաձայն վերադարձվող եկամտային հարկի գումարները հայտարարագրում արտացոլվում են այն հաշվետու ժամանակահատվածում, երբ այդ գումարները փաստացի ստացվում են:

– Բանկային ավանդի տոկոսները հայտարարագրվում են ըստ փաստացի վճարման՝ անկախ նրանից՝ դրանք գումարվել են ավանդին, փոխանցվել են ընթացիկ որևէ հաշվին, թե կանխիկացվել են:

– Գործատուների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրվող փոխհատուցման վճարները (գործուղման ծախսերի հատուցման վճարները, դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները և այլն) չեն հայտարարագրվում որպես եկամուտ, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում տրվող չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

– Բանկային ավանդի դիմաց միևնույն բանկից միևնույն արժույթով ստացված տոկոսները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– Տարաժամկետ վճարման պայմանով գույքի վաճառքի գործարքներում եկամուտ է համարվում գույքի վաճառքի ամբողջ գումարը, իսկ տվյալ տարվա հունվարի 1-ի կամ դեկտեմբերի 31-ի դրությամբ գնորդից ստացման ենթակա գումարն արտացոլվում է **«Հանձնած փոխառություններ»** բաժնում որպես տրված փոխառություն:

– Բնամթերային եկամուտներն արտացոլվում են սույն հավելվածի **«Ընդհանուր դրույթներ»** բաժնում սահմանված կարգով:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ ստացված եկամուտների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի ստացված եկամուտների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց «Նկարագրություն» դաշտում պետք է նշի, թե ընդհանուր որքան եկամուտ է ստացվել:

41) **«Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտները»** բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Եկամուտ ստացող հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Եկամտի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի տեսակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում են այլ եկամտի վերաբերյալ տեղեկություններ:

– **«Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը»** դաշտում լրացվում է իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը: Օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, անծանոթ և այլն: Կողմերի միջև առկա կապի բնույթը պարտադիր է նկարագրել, եթե եկամուտ վճարողը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, հակառակ դեպքում այս դաշտում կարող է նշվել գծիկ՝ «-»: Աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում այս դաշտում կարող է լրացվել նաև **«Գործատու»**, ստացված վարկերի դեպքում՝ **«Բանկի հաճախորդ»** և այլն:

– **«Եկամտի չափը»** դաշտում լրացվում է տվյալ տարվա ընթացքում ուղղակի կամ անուղղակի ձևով ստացված եկամտի չափը: Բնամթերային եկամուտների դեպքում այս դաշտում լրացվում է «0»:

– **«Եկամտի արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի արժույթը:

– **«Բնամթերային ձևով ստացված եկամուտը»** դաշտում նշվում է բնամթերքով ստացված եկամտի չափը: Պայմանագրով չկարգավորվելու դեպքում բնամթերային եկամուտներն արտացոլվում են ստացման տարում այն ձեռքբերելու հնարավոր գնով: Հնարավոր կամ շուկայական գին է համարվում այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար կամ այն գինը, որով գույքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը համաձայն է վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը համաձայն է ձեռքբերել այդ գույքը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամուտը վճարողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է եկամուտը վճարողի հասցեն:

42) **«Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ»** բաժնի՝

– **«Եկամուտ ստացող (վարկառու կամ փոխառու) հայտարարատուի անունը, ազգանունը, հայրանունը»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար

անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Վարկատուի կամ փոխատուի անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը»** դաշտում լրացվում է վարկատու կամ փոխատու իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է վարկը կամ փոխառությունը տվողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է վարկը կամ փոխառությունը տվողի հասցեն:

– **«Վարկի կամ փոխառության արժույթը»** դաշտում ընտրվում է տրվող վարկի կամ փոխառության արժույթը:

– **«Փոխառության մնացորդի չափը»** դաշտում նշվում է փոխառության մնացորդի չափը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է փոխառուի և փոխատուի միջև կնքված պայմանագրում կամ համաձայնագրում նշված տոկոսադրույքը:

– **«Փոխառության նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է ստացված փոխառության նպատակը:

– **«Վարկի մայր գումարի մնացորդի չափը»** դաշտում նշվում է վարկի մայր գումարի մնացորդի չափը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– **«Վարկի նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է ստացվել վարկը (սպառողական վարկ, հիփոթեքային վարկ, լոմբարդային վարկ, գյուղատնտեսական վարկ և այլն):

– **«Հիփոթեքի առարկան»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի տեսակը՝ հողամաս, անհատական բնակելի տուն, բնակարան, շենք և շինություններ և այլն:

– **«Հիփոթեքի առարկայի գտնվելու վայրը»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի գտնվելու հասցեն:

43) **«Գ.2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** դաշտում լրացվում են հայտարարատուի եկամուտների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

44) **«Դ. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ, ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԾԱԽՍԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Դ.1.-Դ.6. բաժիններում հայտարարագրման ենթակա են հաշվետու ժամանակահատվածի այն ծախսերը, որոնց միանվագ արժեքը գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 2 մլն-ի շեմ) կամ տվյալ տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է 3 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 3 մլն-ի շեմ): Նշված 6 տեսակի ծախսերից յուրաքանչյուր տեսակի համար 3 մլն-ի շեմը կիրառվում է առանձին: Օրինակ, եթե անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը (դիզայն, սալիկապատում, ներկում և այլն) առանձին-առանձին չեն գերազանցում 2 մլն-ի շեմը, սակայն դրանց հանրագումարը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 3 մլն-ի շեմը, ապա այդ ծախսերը ենթակա են հայտարարագրման:

– Դ.7.-Դ.8. բաժիններում հայտարարագրման ենթակա է Դ.1.-Դ.6. բաժիններում չնշված ցանկացած ծախս, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում

գերազանցել է 2 մլն-ի շեմը: Ընդ որում, գնման տվյալ առարկայի (ապրանքի, ծառայության) դիմաց կատարվող վճարումն արհեստականորեն տրոհելը մեկից ավելի վճարումների չի ազատում տվյալ ծախսի հայտարարագրման պարտավորությունից:

– Վերը նշված շեմերից փոքր արժեքով ծախսերի հայտարարագրումը չի համարվում սույն ուղեցույցի կամ հայտարարագրի լրացման կարգի խախտում:

– Եթե հայտարարատու անձը մարում է համապատասխան շեմերը գերազանցող այլ անձանց պարտավորությունները (ուսման վարձ, վարկ, անշարժ գույքի վարձ և այլն), տվյալ գործարքը սույն ուղեցույցի իմաստով համարվում է այլ անձանց տրված նվիրատվություն և ենթակա է հայտարարագրման «Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բաժնում, բացառությամբ ի շահ հայտարարատուի ամուսնու և անչափահաս զավակների կատարվող ծախսերի, որոնք հայտարարագրվում են Դ.1.-Դ.6. բաժիններում:

– Եթե նույն տեսակի ծախսերը տարվա ընթացքում կատարվել են տարբեր արժույթներով, ապա հարկավոր է նշել ծախսի մոտավոր չափը կա՛մ արտարժույթով, կա՛մ ՀՀ դրամով: Օրինակ, եթե հանգստի համար կատարած ճանապարհածախսը կատարվել է ՀՀ դրամով, իսկ կեցության ծախսը՝ ԱՄՆ դոլարով, ապա ընդհանուր ծախսը պետք է ներկայացնել կա՛մ ՀՀ դրամով, կա՛մ ԱՄՆ դոլարով:

– Տարվա ընթացքում կատարված ծախսի հստակ արժեքը ներկայացնելու անհնարինության դեպքում, հայտարարատու անձը պետք է ներկայացնի կատարված ծախսի մոտավոր արժեքը:

– Վարկային գծի և օվերդրաֆթի մարումները կարող են չհայտարարագրվել որպես ծախս, սակայն որպես տվյալ տարվա եկամուտ հայտարարագրվում են տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարները: Միևնույն ժամանակ, տարեվերջի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի մայր գումարների չմարված մնացորդը պետք է արտացոլվի «**Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ**» բաժնում:

45) «**Դ.1. Հանգստի համար կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս**» բաժնի՝

– «**Հայտարարատուի տվյալները**» դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– «**Ծախսի բովանդակությունը**» դաշտում պետք է ներկայացվեն հանգստի մեկնելու ուղղությունը (ուղղությունները) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– «**Ծախսի չափը (գումարը)**» դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում հանգստի համար կատարված ճանապարհածախսի և կեցության ծախսի ընդհանուր արժեքը:

– «**Արժույթը**» դաշտում ընտրվում է կատարված ծախսի արժույթը:

46) «**Դ.2. Շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճար**» բաժնի՝

– «**Հայտարարատուի տվյալները**» դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարձակալված շարժական կամ անշարժ գույքի օբյեկտը: Հանգստի համար վարձակալված շարժական կամ անշարժ գույքը հայտարարագրվում է **«Դ.1. Հանգստի համար կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս»** բաժնում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների համար կատարված ծախսի արժույթը:

47) **«Դ.3. Ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճար»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում են կրթական հաստատության տվյալները կամ այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող գումարների ընդհանուր չափը: Արտասահմանում կամ բնակության վայրից դուրս ուսումնառության ընթացքում կեցության համար կատարվող ծախսը, ճանապարհածախսը և այլ ծախսերը չեն համարվում ուսման վճարներ և ենթակա են հայտարարագրման միայն 2 մլն-ի շեմը գերազանցելու դեպքում՝ **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնում**:**

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող ծախսի արժույթը:

48) **«Դ.4. Գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացնել տարվա ընթացքում գյուղատնտեսական գործունեության հետ կապված բոլոր ծախսերի բնույթը (հողերի վար, ցանք, ոռոգում, աշխատուժի վարձակալում, կենդանիների ձեռքբերում և այլն) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերի ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսի արժույթը:

49) **«Դ.5. Վարկի մարմանն ուղղված վճարումներ»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարկի նպատակը: Եթե պաշտոնատար անձի վարկի մարումը կատարվում է այլ անձանց կողմից, անհրաժեշտ է նշել, թե ինչ նպատակով է վարկը մարում այլ անձը (երաշխավորություն, օգնություն և այլն), ինչպես նաև՝ կապը տվյալ անձի հետ:

Յուրաքանչյուր վարկատեսակ (սպառողական, հիփոթեքային և այլն) կարող է լրացվել առանձին տողով, սակայն 3 մլն-ի շեմը կիրառվում է տվյալ հաշվետու ժամանակահատվածում բոլոր վարկերի մարմանն ուղղված վճարումների հանրագումարի նկատմամբ, այդ թվում՝ մայր գումար, տոկոսներ, տույժեր, տուգանքներ, սպասարկման վճարներ, կոմիսիոն վճարներ և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում վճարված վարկի մայր գումարի, տոկոսագումարի, այլ վճարների (հայտի ուսումնասիրություն, սպասարկում, գրավի գնահատում և այլն), տույժերի, տուգանքների ընդհանուր գումարը: Հայտարարատու պաշտոնատար անձի՝ այլ անձանց կողմից մարված վարկերը պետք է հայտարարագրել նաև **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»** բաժնում՝ որպես անուղղակի ստացած եկամուտ:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է վարկի մարման համար կատարված ծախսի արժույթը: Տարբեր արժույթներով վարկերի դեպքում մարման համար կատարված ծախսերը պետք է ներկայացնել տվյալ արժույթով:

50) **«Դ.6. Անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացվեն անշարժ գույքի ընթացիկ և կապիտալ վերանորոգմանը վերաբերվող տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ծախսերի բնույթը հասկանալու համար:

Անշարժ գույքի կառուցման հետ կապված ծախսերը այս բաժնում չեն ներառվում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերի ընդհանուր արժեքը (ընթացիկ և կապիտալ նորոգման ծախսեր, ջրամատակարարման, ջեռուցման կամ օդափոխման համակարգերի տեղադրման կամ նորացման, գազաֆիկացման և էլեկտրաֆիկացման, բնակելի տան բակային տարածքի հարդարման, կանաչապատման, ասֆալտապատման և այլ ծախսեր, այդ թվում՝ փաստաթղթերով չհիմնավորված:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսի արժույթը:

51) **«Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում են այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են գործարքի էությունը ներկայացնելու համար (նվիրատվության կամ օգնության նպատակը, ստացողը, հայտարարատուի կապը նրա հետ և այլն):

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում հայտարարագրվում են նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի արժեքը, այդ թվում՝ դրամական միջոցները, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Սույն բաժնում չեն ներառվում հայտարարագրման ենթակա անշարժ և շարժական գույքերը, բացառությամբ՝ դրամական միջոցների:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի գումարի (արժեքի) արժույթը:

52) **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ ծախսերի բնույթը, օրինակ՝ առողջության վերականգնման համար կատարված ծախսեր, ընտանեկան խնջույքների կազմակերպման ծախսեր և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում հայտարարագրվում են 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի գումարը, որոնք ներկայացված չեն Դ.1.-Դ.7. բաժիններում:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի արժույթը:

53) **«Դ.9. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների ծախսերի վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք հայտարարատուն նպատակահարմար է գտնում ներկայացնել՝ հայտարարագրված ծախսերի վերաբերյալ տեղեկություններն ամբողջացնելու համար:

54) **«Ե. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՇԱՀԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ»** բաժինը ներառում է՝

55) **«Ե.1. Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում»** բաժինը լրացնելիս հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նա և (կամ) իր ընտանիքի անդամները ներկայացված են եղել տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում: Այն լրացվում է հետևյալ կերպ՝

– **«Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի այն անդամի անունը, ազգանունը, հայրանունը, որը ներկայացված է տվյալ առևտրային կազմակերպության

կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում (մասնակիցների ընդհանուր ժողովի անդամ, գործադիր մարմնի ղեկավար, վերստուգող հանձնաժողովի անդամ և այլն),

– **«Կազմակերպության անվանումը»** դաշտում լրացվում է այն առևտրային կազմակերպության անվանումը, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված են եղել հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) իր ընտանիքի անդամները տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում,

– **«Հարկ վճարողի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է այն առևտրային կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) իր ընտանիքի անդամները,

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կազմակերպության գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է կազմակերպության գտնվելու հասցեն:

– **«Հայտարարատու պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի անդամների կարգավիճակը կազմակերպությունում»** դաշտում լրացվում է, թե տվյալ առևտրային կազմակերպությունում ինչ ներկայացվածություն ունի հայտարարատու պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը,

56) **«Ե.2. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»** բաժինը լրացնելիս հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն կազմակերպությունների տվյալները, որոնցում նա և (կամ) իր ընտանիքի անդամները մասնակցություն են ունեցել տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում: Այն լրացվում է հետևյալ կերպ՝

– **«Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի այն անդամի անունը, ազգանունը, հայրանունը, որն առևտրային կազմակերպությունում հիմնադիր է հանդիսանում կամ այդ կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցություն ունի,

– **«Կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) տոկոսը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի ունեցած մասնակցության տոկոսը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ,

– **«Կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ,

– **«Կազմակերպությունում ունեցած մասնակցության ձեռք բերելու ամսաթիվ»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի կողմից տվյալ կազմակերպությունում ունեցած մասնակցության ձեռքբերման ամսաթիվը: Եթե տվյալ կազմակերպության փայերի, բաժնետոմսերի կամ բաժնեմասերի ձեռքբերման մեկից ավելի գործարքներ են տեղի ունեցել, այս դաշտում նշվում է ամենավաղ ձեռքբերման ամսաթիվը,

– **«Կազմակերպության անվանումը»** դաշտում նշվում է այն առևտրային կազմակերպության անվանումը, որտեղ տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում

մասնակցություն են ունեցել հայտարարատու պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը,

– **«Կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)»** դաշտում լրացվում է տվյալ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը,

– **«Կազմակերպության հասցեն»** դաշտում լրացվում է տվյալ կազմակերպության գտնվելու վայրի տվյալները (իրավաբանական հասցեն):

57) **«Ե.3. Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը»** բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց կանոնադրական կապիտալում նա և (կամ) իր ընտանիքի անդամները ունեցել են մասնակցություն տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում: Այն լրացվում է հետևյալ կերպ՝

– **«Կազմակերպության անվանումը, որի նկատմամբ պաշտոնատար անձի գույքային իրավունքը հանձնվել է հավատարմագրային կառավարման»** դաշտում լրացվում է կազմակերպության լրիվ անվանումը,

– **«Հավատարմագրային կառավարչի անվանումը կամ անուն, ազգանունը»** դաշտում լրացվում է կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը և ազգանունը, որին հավատարմագրային կառավարման է հանձնվել բաժնետոմսերը, բաժնեմասը կամ փայաբաժինը,

– **«Հավատարմագրային կառավարչի հարկ վճարողի հաշվառման համարը կամ հանրային ծառայությունների համարանիշը»** դաշտում լրացվում է հավատարմագրային կառավարչի հարկ վճարողի հաշվառման համարը, եթե այն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հավատարմագրային կառավարչի հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ),

– **«Հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին»** դաշտում լրացվում է հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման ամսաթիվը, իսկ եթե հավատարմագրային կառավարման հանձնման ամսաթիվը տարբերվում է դրանից, ապա՝ հավատարմագրային կառավարման հանձնման ամսաթիվը,

– **«Պայմանագրի գործողության ժամկետը»** դաշտում լրացվում է հավատարմագրային կառավարման պայմանագրի ավարտի ժամկետը,

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է հավատարմագրային կառավարչի գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է հավատարմագրային կառավարչի գտնվելու հասցեն:

58) **«Ե.4. Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում»** բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն ոչ առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց նա անդամակցում է, կամ որոնց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նա ներկայացված է եղել տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում: Այն լրացվում է հետևյալ կերպ՝

– **«Կազմակերպության անվանումը»** դաշտում լրացվում է այն ոչ առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց նա անդամակցել է, կամ որոնց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նա ներկայացված է եղել տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում,

– **«Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)»** դաշտում լրացվում է ոչ առևտրային կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը,

– **«Կազմակերպությունում հայտարարատուի կարգավիճակը»** դաշտում լրացվում է, թե տվյալ ոչ առևտրային կազմակերպությունում ինչ ներկայացվածություն է ունեցել հայտարարատու պաշտոնատար անձը հաշվետու ժամանակահատվածում (անդամ, գործադիր մարմնի ղեկավար, հոգաբարձուների խորհրդի անդամ և այլն),

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու հասցեն:

59) **«Ե.5. Հայտարարատուի անդամակցությունը կուսակցություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում»** բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է այն կուսակցության տվյալները, որին նա անդամակցել է տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում և նշում է իր ներկայացվածությունը կուսակցության կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում: Այն լրացվում է հետևյալ կերպ՝

– **«Կուսակցության անվանումը»** դաշտում լրացվում է այն կուսակցության անվանումը, որին անդամակցել է հայտարարատու պաշտոնատար անձը տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում,

– **«Կուսակցությունում անձի կարգավիճակը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի կարգավիճակը կուսակցությունում, նրա ներկայացվածությունը կուսակցության ղեկավար մարմիններում:

60) **«Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է իր, իր ընտանիքի անդամների և նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կնքված այն պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և որոնք գործել են **տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում**: Պայմանագիրը ենթակա չէ հայտարարագրման, եթե Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունում հայտարարատու պաշտոնատար անձի և իր ընտանիքի անդամների մասնակցության հանրագումարը չի գերազանցում 1 (մեկ) տոկոսը,

– Այս բաժնում հայտարարագրվում են նաև այն պայմանագրերը, որոնց արժեքը սահմանված է միավոր ապրանքի կամ ծառայության համար և որոնց շրջանակներում

տվյալ տարվա ընթացքում փաստացի վճարված գումարը գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը»:

Սույն բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Պաշտոն զբաղեցնող անձը, նրա ընտանիքի անդամները և (կամ) նրա(նց) մասնակցությամբ կազմակերպությունը»** դաշտում լրացվում են պետության կամ համայնքի հետ կնքված պայմանագրի կողմ հանդիսացող անձի անունը և ազգանունը կամ անվանումը,

– **«Պայմանագրի տեսակը»** դաշտում լրացվում է պետության կամ համայնքի հետ կնքված պայմանագրի տեսակը (ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման և այլն),

– **«Պայմանագրի առարկան»** դաշտում լրացվում է պայմանագրով սահմանված գործարքի համառոտ նկարագրությունը,

– **«Պայմանագրի կողմը (ՀՀ պետական մարմին, համայնք)»** դաշտում լրացվում է պայմանագրի կողմ հանդիսացող պետական մարմնի կամ համայնքի անվանումը,

– **«Տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին»** դաշտում լրացվում է, թե գնման կամ վաճառքի ինչ գործընթացի շրջանակներում է կնքվել պայմանագիրը (բաց մրցույթ, մեկ անձ, աճուրդ),

– **«Պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին»** դաշտում լրացվում է պայմանագրի կնքման օրը, ամիսը և տարին,

– **«Գործողության ժամկետը»** դաշտում նշվում է պայմանագրի գործողության ժամկետի ավարտի ամսաթիվը: Անժամկետ պայմանագրի դեպքում այս դաշտը չի լրացվում,

– **«Գինը (արժեքը)»** դաշտում լրացվում է պայմանագրով սահմանված արժեքը: Եթե պայմանագրով սահմանված է ոչ թե արժեքը, այլ արժեքի որոշման ձևը, ապա նշվում է տվյալ տարվա ընթացքում փաստացի վճարված գումարի չափը,

– **«Փաստացի վճարված գումարն ըստ պայմանագրի»** դաշտում լրացվում է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի հետ կնքված պայմանագրի շրջանակներում տվյալ տարվա ընթացքում փաստացի վճարված գումարի չափը, եթե պայմանագրով սահմանված է ոչ թե դրա ընդհանուր արժեքը, այլ արժեքի որոշման ձևը (օրինակ՝ միավոր ծառայության արժեքը) և տվյալ տարվա ընթացքում փաստացի վճարված գումարը գերազանցել է հինգ միլիոն ՀՀ դրամը: Պայմանագրի ընդհանուր արժեքը սահմանված լինելու դեպքում այս դաշտը կարող է չլրացվել (լրացվում է «Գինը (արժեքը)» դաշտը):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու հասցեն:

61) **«Ե.7. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների շահերի վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

III. Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի լրացման ուղեցույց

Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի՝

1) **«Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի տվյալները»** բաժնում լրացվում են՝

– անունը, ազգանունը և հայրանունը՝ ըստ անձնագրի,
– ծննդյան օրը, ամիսը, տարին՝ ըստ անձնագրի,
– հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը,
– հաշվառման հասցեն,
– փաստացի բնակության հասցեն:

Եթե հայտարարատուի հաշվառման հասցեն նույնական է բնակության հասցեի հետ, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Այո» պատասխանը, որից հետո համակարգը ինքնաշխատ եղանակով կներբեռնի համապատասխան հասցեն «Հաշվառման հասցե» սյունակից: Եթե այն տարբեր է հաշվառման հասցեից, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Ոչ» պատասխանը, որից հետո մուտքագրի իր բնակության հասցեի տվյալները:

– պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը, որտեղ պաշտոն է զբաղեցնում պաշտոնատար անձը,
– պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնի անվանումը,
– պաշտոնատար անձի՝ պաշտոնն ստանձնելու/դադարեցնելու օրը, ամիսը, տարին (լրացվում է համակարգի կողմից ինքնաշխատ),
– Էլեկտրոնային փոստի հասցե:

Առավել նպատակահարմար է նշել անձնական և մշտադիտարկվող էլեկտրոնային հասցեն, քանի որ այն հանդիսանում է հայտարարատուին ծանուցելու պաշտոնական միջոց, իսկ հասանելի և գործող էլեկտրոնային հասցե չտրամադրելու դեպքում օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթների մասին չտեղեկանալու բացասական հետևանքները կրելու է հայտարարատուն: Այս դաշտում նշվում է մեկ էլեկտրոնային փոստի հասցե:

– «Բջջային հեռախոսահամար» դաշտում առավել նպատակահարմար է նշել անձնական բջջային հեռախոսահամարը:
– «Ֆիքսված հեռախոսահամար» դաշտում նշվում է ֆիքսված հեռախոսահամարը:
– Հայտարարագրի ներկայացման օրը, ամիսը, տարին լրացվում են ինքնաշխատ՝ համակարգի կողմից:

2) **«Բ.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով ձեռքբերած անշարժ գույքի արժեքը հայտարարագրվում է նաև եկամուտների հայտարարագրման բաժնում (Գ.1.) որպես բնամթերային եկամուտ՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:
– Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրում արտացոլվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում սահմանված կարգով:

– Հայտարարատուի կողմից կառուցված և տվյալ տարում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման դեպքում՝ «Ձեռքբերման արժեքը» դաշտում նշվում է շինարարության նախահաշվային փաստաթղթերում նշված արժեքը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ շինարարության փաստացի արժեքը:

– «Բ.1.1. Տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույքը» բաժնում հայտարարագրվում են միայն այն անշարժ գույքի վերաբերյալ տվյալները, որն առկա է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ: Այն անշարժ գույքը, որը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ պետական գրանցում դեռևս չի ստացել (կառուցման ընթացքում գտնվող, ձեռքբերված, բայց պետական գրանցում չստացած), ենթակա չէ հայտարարագրման:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող անշարժ գույքը: Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում 90 օր կամ ավելի գումարային ժամկետով բնակվել է (վարձակալական հիմունքներով կամ անհատույց) իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում5 կամ, թեև անձը փաստացի չի բնակվում իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում, սակայն բնակարանը գտնվում է նրա տիրապետման ներքո և նա կատարում է տվյալ բնակարանի պահպանմանն ուղղված գործողություններ, օրինակ, վճարում է կոմունալ վճարները, կատարում է ընթացիկ վերանորոգում և այլն:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ անշարժ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

3) **«Բ.1.1. Տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույքը»** բաժնի՝

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույքը հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Սեփականության իրավունքի տեսակը»** դաշտում լրացվում է՝ «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի անձինք և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, եթե տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը: Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– **«Հայտարարատուի բաժինը»** դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

---

5 Տվյալ գույքը ենթակա չէ հայտարարագրման, եթե սեփականության իրավունքով պատկանում է հայտարարատու անձի ընտանիքի անդամին և վերջինս այդ գույքի վերաբերյալ տվյալները ներկայացրել է իր հայտարարագրում:

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը իսկ ֆիզիկական անձի դեպքում ՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, գործընկեր և այլն:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– **«Անշարժ գույքը ձեռք բերելու ամսաթիվը»** դաշտում նշվում է գույքի պետական գրանցման ամսաթիվը: Կառուցվող անշարժ գույքի դեպքում (այդ թվում՝ կառուցապատողից անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) նույնպես նշվում է անշարժ գույքի պետական գրանցման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տողն ընտրելու դեպքում հարկավոր է տալ բացատրություն «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը: Եթե անշարժ գույքի միավորի (օրինակ՝ հողամասի) մի մասն օտարվել է հաշվետու ժամանակահատվածում, ընտրվում է «Մասնակի» տարբերակը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

4) **«Բ.1.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված անշարժ գույքը»** բաժնի՝

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե ձեռք է բերվել հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Սեփականության իրավունքի տեսակը»** դաշտում լրացվում է՝ «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի

անձինք և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, եթե տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը: Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– **«Հայտարարատուի բաժինը»** դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը,

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Անշարժ գույքը ձեռք բերելու ամսաթիվը»** դաշտում նշվում է գույքի ձեռքբերման ամսաթիվը: Կառուցվող անշարժ գույքի դեպքում (այդ թվում՝ կառուցապատողից անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) նշվում է անշարժ գույքի պետական գրանցման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տողն ընտրելու դեպքում հարկավոր է տալ բացատրություն «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

– **«Նկարագրություն»** դաշտում նշվում է այլ եղանակով անշարժ գույքի ձեռքբերման մանրամասները:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է գործարքի գինը: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտում լրացվում է «0», միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում որպես բնամթերային ձևով ստացված եկամուտ հայտարարագրվում է գույքի արժեքը՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով,

– **«Չափման միավոր»** դաշտում, որպես կանոն, ընտրվում է «մ^2» չափման միավորը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գույքի ձեռքբերման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը: Եթե

անշարժ գույքի միավորի (օրինակ՝ հողամասի) մի մասն օտարվել է հաշվետու ժամանակահատվածում, ընտրվում է «Մասնակի» տարբերակը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

5) **«Բ.1.2. Տվյալ տարվա ընթացքում օտարված անշարժ գույքը»** բաժնի՝

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե օտարվել է հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Սեփականության իրավունքի տեսակը»** դաշտում լրացվում է՝ «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի անձինք և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, եթե տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը: Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– **«Հայտարարատուի բաժինը»** դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը,

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Օտարման ամսաթիվը»** դաշտում նշվում է անշարժ գույքի օտարման ամսաթիվը:

– **«Օտարման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Օտարման արժեքը»** դաշտում լրացվում է գործարքի գինը: Անհատույց օտարման դեպքում այս դաշտում նշվում է զրո (0):

– **«Օտարման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի օտարման գործարքի արժույթը:

– **«Օտարված անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– **«Չափման միավոր»** դաշտում, որպես կանոն, ընտրվում է «մ²» չափման միավորը:

– «**Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն**» դաշտում գույքի օտարման գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում լրացվում են անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս անվանումը, ինչպես նաև լրացվում է գործարքի մյուս կողմի հասցեն:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

6) **«Բ.1.3. Տվյալ տարվա վերջում առկա անշարժ գույքը»** բաժինը լրացվում է ինքնաշխատ:

7) **«Բ.1.4.Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե օտարվել է հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով,

– «**Չափման միավոր**» դաշտում, որպես կանոն, ընտրվում է «մ²» չափման միավորը,

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի սեփականատիրոջ (սեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

8) **«Բ.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով տվյալ տարվա ընթացքում ձեռքբերված տրանսպորտի միջոցի արժեքը հայտարարագրվում է նաև եկամուտների հայտարարագրման բաժնում (Գ.1.) որպես բնամթերային եկամուտ՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– Տրանսպորտի միջոցի ձեռքբերման դեպքում տվյալ տարվա հունվարի 1-ի և (կամ) դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի վճարված կանխավճարի (նախավճարի) մնացորդը հայտարարագրվում է «Հանձնած և վերադարձված փոխառություններ» բաժնում:

– Տարաժամկետ վճարմամբ տրանսպորտի միջոցի ձեռքբերման դեպքում տվյալներն արտացոլվում են այս բաժնում՝ որպես տվյալ տարում տրանսպորտի միջոցի ձեռքբերում: Միաժամանակ, փաստացի չվճարված գումարը հայտարարագրվում է եկամուտների հայտարարագրման բաժնում՝ որպես **«Ստացված փոխառություն (վարկ)»**:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված տրանսպորտի միջոցի): Օրինակ՝ հայտարարատուն տարվա ընթացքում առնվազն 90 օր վարել է ավտոմեքենա, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և ավտոմեքենան փոխանցել է օգտագործման հայտարարատուին:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն տրանսպորտի միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտի միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

9) **«Բ.2.1. Տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի միջոցը»** բաժնի՝

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառված են կամ ենթակա են հաշվառման:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման ամսաթիվը: Ձեռքբերման ամսաթիվ է համարվում ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ տրանսպորտային միջոցի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:

– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

10) **«Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված տրանսպորտի միջոցը»** բաժնի՝

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարում ձեռքբերված տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառված են կամ ենթակա են հաշվառման:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը:

– **«Նկարագրություն»** դաշտում նշվում է այլ եղանակով տրանսպորտային միջոցի ձեռքբերման մանրամասները:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման ամսաթիվը: Ձեռքբերման ամսաթիվ է համարվում ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է գործարքի գինը: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտում լրացվում է «0», միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում որպես բնամթերային ձևով ստացված եկամուտ հայտարարագրվում է գույքի արժեքը՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան: ՀՀ տարածքից դուրս (այդ թվում՝ արտասահմանյան աճուրդներից) ձեռքբերված տրանսպորտային միջոցների դեպքում ձեռքբերման արժեքը ներառում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման օրվանից մինչև ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը կատարված բոլոր ծախսերը (ձեռքբերման, տեղափոխման, մաքսազերծման, ապահովագրության և այլն) և կարող է ներկայացվել տրանսպորտային միջոցի ձեռքբերման արժույթով կամ ՀՀ դրամով:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման գործարքի արժույթը: ՀՀ տարածքից դուրս (այդ թվում՝ արտասահմանյան աճուրդներից) ձեռքբերված տրանսպորտային միջոցի դեպքում, երբ մինչև ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը կատարվել են ծախսեր տարբեր արժույթներով (ձեռքբերման, տեղափոխման, մաքսազերծման, ապահովագրության և այլն), դրա արժեքը կարող է ներկայացվել տրանսպորտային միջոցի ձեռքբերման արժույթով կամ ՀՀ դրամով:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն՝ վերջինիս առկայության դեպքում:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարեվերջին տվյալ տրանսպորտային միջոցի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:
– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:
– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:
– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:
– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

11) **«Բ.2.2. Տվյալ տարվա ընթացքում օտարված տրանսպորտի միջոցը»** բաժնի՝

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ տարում օտարված տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառված են կամ ենթակա են հաշվառման:
– **«Օտարման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է օտարման համապատասխան եղանակը:
– **«Նկարագրություն»** դաշտում նշվում է այլ եղանակով տրանսպորտային միջոցի օտարման մանրամասները:
– **«Օտարման ամսաթիվը»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի օտարման ամսաթիվը:
– **«Օտարման արժեքը»** դաշտում լրացվում է գործարքի գինը: Անհատույց օտարման դեպքում այս դաշտում նշվում է զրո (0):
– **«Օտարման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտային միջոցի օտարման գործարքի արժույթը:
– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:
– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:
– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:
– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:
– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

12) **«Բ.2.3. Տվյալ տարվա վերջում առկա տրանսպորտի միջոցը»** բաժինը լրացվում է ինքնաշխատ:

13) **«Բ.2.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը, այն տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտային միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Տրանսպորտի միջոցի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

14) **«Բ.3. ԱՐԺԵԹՂԹԵՐ ԵՎ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների արժեքը տվյալ տարվա սկզբում և տվյալ տարվա վերջում հաշվարկվում է ձեռքբերման արժեքով: Օրինակ՝ հայտարարատուն տարիներ առաջ 100,000 պմ-ով ձեռք է բերել «X» ընկերության 100% բաժնեմասը: Տարվա ընթացքում հայտարարատուն 800,000 պմ-ով վաճառում է բաժնեմասերի 70%-ը: Տվյալ դեպքում տարեկան հայտարարագրում որպես տարեսկզբի մնացորդ պետք է հայտարարագրվի «X» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը՝ 100,000 պմ արժեքով, իսկ որպես տարեվերջի մնացորդ կհայտարարագրվի մնացորդային 30% բաժնեմասը՝ 30,000 պմ ձեռքբերման արժեքով: Միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում կհայտարարագրվի բաժնեմասերի 70%-ի վաճառքից ստացված եկամուտը (վաճառքի գումարը)՝ 800,000 պմ արժեքով:

– Ներդրումային ֆոնդերի փայերը հայտարարագրվում են ընդհանուր կարգով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը չեն հայտարարագրվում:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն արժեթուղթը (բաժնեմասը), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով գրանցված է այլ անձի անունով, սակայն առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի անունից/օգտին, այսինքն՝ արժեթուղթը փաստացի ձեռք է բերվել հայտարարատու անձի համար: Հայտարարատու անձը չհանդիսանալով արժեթղթի սեփականատեր, այնուամենայնիվ ունի փաստացի հնարավորություն վերջինիս հետ կապված որոշումներ կայացնելու հարցում **կամ**

✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի հաշվին, այսինքն՝ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատու անձի դրամական կամ այլ գույքային միջոցներով, վերջինիս հաշվին **կամ**

✓ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն, այսինքն՝ թեև արժեթուղթը գրանցված է երրորդ անձի անունով, սակայն տվյալ արժեթղթից օգուտներ՝ շահաբաժնի կամ որևէ այլ ձևով, ստանում է հայտարարատու անձը **կամ**

✓ այդ արժեթուղթը փաստացի տնօրինում է հայտարարատուն, այսինքն՝ հայտարարատու անձը գույքի ճակատագիրը որոշելու հարցում ունի վճռորոշ

ազդեցություն: Հայտարարատու անձն է որոշում կայացնում, օրինակ, արժեթուղթը վաճառելու կամ նվիրելու վերաբերյալ, թեև չի հանդիսանում արժեթղթի գրանցված սեփականատեր:

– Հայտարարատուի բաժնեմասնակցությամբ ընկերության գույքի, ինչպես նաև ընկերության դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները ենթակա չեն հայտարարագրման: Հայտարարագրման ենթակա չեն նաև այն կազմակերպության գույքի, ինչպես նաև դրա դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ կազմակերպությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

15) **«Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ»** բաժնի՝

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայաբաժին):

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է հանդիսանում հայտարարատուն:

– **«Ձեռքբերման ամսաթիվ»** դաշտում լրացվում է արժեթղթի ձեռքբերման ամսաթիվը: Եթե տվյալ տարվա ընթացքում տվյալ ընկերության բաժնային արժեթղթեր կամ բաժնեմաս ձեռք է բերվել մեկից ավելի անգամ, ապա բոլոր ձեռքբերումները հայտարարագրվում են առանձին:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը:

– **«Նկարագրություն»** դաշտը լրացվում է, եթե «Ձեռքբերման եղանակը» դաշտում ընտրվել է ձեռքբերման «Այլ» եղանակը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում գույքի օտարման գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում լրացվում են անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս անվանումը, ինչպես նաև լրացվում է գործարքի մյուս կողմի հասցեն:

– **«Հայտարարատուի և գործարքի մյուս կողմի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Տվյալ տարվա սկզբում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատուին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Տվյալ տարվա վերջում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Տվյալ տարվա վերջում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատուին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

16) **«Բ.3.2. Բաժնային արժեթուղթ կամ այլ ներդրում, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ արժեթղթից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայաբաժին):

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է հանդիսանում հայտարարատուն:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Տվյալ տարվա սկզբում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատուին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Տվյալ տարվա վերջում առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Տվյալ տարվա վերջում բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատուին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ,

– **«Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

17) **«Բ.3.3. Պարտքային և այլ արժեթղթեր»** բաժնի՝

– **«Արժեթղթի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային կամ այլ արժեթղթի տեսակը: «Այլ արժեթուղթ» տողն ընտրելու դեպքում հայտնված «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում նկարագրվում է այլ պարտքային արժեթղթի տեսակը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժեթղթի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում նշվում է արժեթղթի ձեռքբերման ամսաթիվը:

– **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտում լրացվում է «Արժեթղթի տեսակը» և (կամ) «Ձեռքբերելու եղանակը» դաշտերում «Այլ» տողը ընտրելու դեպքում: Այս դեպքում լրացվում է այլ արժեթղթի և (կամ) ձեռքբերման այլ եղանակի տեսակը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Արժեքը (գինը) տվյալ տարվա սկզբում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժեթղթի արժեքը ձեռքբերման գնով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ արժեթղթի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Արժեքը (գինը) տվյալ տարվա վերջում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա արժեթղթի արժեքը՝ ձեռքբերման գնով:

18) **«Բ.3.4. Պարտքային կամ այլ արժեթուղթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Արժեթղթի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային և այլ արժեթղթերի տեսակը:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժեթղթի արժեքը ձեռքբերման գնով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ արժեթղթի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա արժեթղթի արժեքը՝ ձեռքբերման գնով:

– **«Պարտքային և այլ արժեթղթերի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է պարտքային և այլ արժեթղթերի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

19) **«Բ.4. ՀԱՆՁՆՎԱԾ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Հայտարարագրվում են հաշվետու տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարատուի հանձնած փոխառությունները և ներդրված բանկային ավանդների գումարները, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում հանձնված և վերադարձված փոխառությունները: Սույն կարգի առումով բանկային ավանդ է համարվում բանկի հետ ժամկետային ավանդի պայմանագրի շրջանակներում որոշակի ժամկետով ներդրված ավանդը, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով սահմանված տոկոսներ:

– Ցպահանջ ավանդները, խնայողական հաշիվների մնացորդները, առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին արտացոլվում են «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում:

– Հայտարարագրվում է մինչև անշարժ գույքի պետական գրանցումը կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց վճարված գումարների մնացորդը (այդ թվում՝ վարկային միջոցներից)՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից հետո այս փոխառության մնացորդը մարվում է (զրոյանում է):

– Այս բաժնում լրացվում են նաև գույքի (անշարժ գույք, տրանսպորտի միջոց, արժեթղթեր և այլ ներդրումներ, թանկարժեք գույք) ձեռքբերման պայմանագրի շրջանակներում փաստացի վճարված կանխավճարի և նախավճարի գումարները, որոնք առկա են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– Այս բաժնում հայտարարագրվում է այն փոխառությունը կամ ավանդը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ փոխառությունից կամ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

20) **«Բ.4.1. Հանձնած և վերադարձված փոխառություններ»** բաժնի՝

– **«Պարտատիրոջ կարգավիճակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Պարտապանի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են պարտապան հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է երկիրը, որի քաղաքացի է հանդիսանում պարտապանը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է պարտապանի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է փոխատուի (պարտատիրոջ) և փոխառուի (պարտապանի) միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ ձեռքբերվող բնակարանի կառուցապատող, եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում լրացվում է տրված փոխառության տոկոսադրույքը, իսկ անտոկոս փոխառության (այդ թվում՝ տրված կանխավճարի, նախավճարի, տարաժամկետ վճարման պայմանով գույքի վաճառքի դեպքում լրացվող փոխառության և այլ) դեպքում՝ զրո:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ հունվարի 1-ի դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Փոխառության արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված և վերադարձված փոխառությունների արժույթը:

– **«Տարվա ընթացքում հանձնված փոխառության գումարը»** դաշտում լրացվում են տվյալ տարվա ընթացքում տրված փոխառության գումարները (այդ թվում՝ կառուցապատողին կամ գույք վաճառողին տրված կանխավճարի և նախավճարի գումարները): Այս դաշտը կարող է չլրացվել, եթե հանձնված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարը»** դաշտում լրացվում են տվյալ տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարները (այդ թվում՝ կառուցվող գույքի պետական գրանցման դեպքում կառուցապատողին վճարված գումարի մարումը, տարաժամկետ վճարման պայմանով վաճառած գույքի արժեքի կամ դրա մի մասի վճարումը): Այս դաշտը կարող է չլրացվել, եթե վերադարձված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտում նշվում են այն փոխառությունների տվյալները, որոնք վերաբերվում են գույքի նախնական առուվաճառքի պայմանագրերով փաստացի վճարված գումարներին կամ գույքի ձեռքբերման պայմանագրերի շրջանակներում հիփոթեքային պայմանագրերով փաստացի վճարված գումարներին, եթե հայտարարատուի սեփականության իրավունքը դեռևս չի գրանցվել, ինչպես նաև այլ տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության:

– **«Տվյալ տարվա վերջում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա փոխառության պարտքի գումարը:

Այս բաժնում լրացվում են նաև այն փոխառությունները, որոնք վերաբերվում են գույքի նախնական առուվաճառքի պայմանագրերով փաստացի վճարված գումարներին կամ գույքի ձեռքբերման պայմանագրերի շրջանակներում հիփոթեքային պայմանագրերով փաստացի վճարված գումարներին, եթե հայտարարատուի սեփականության իրավունքը չի գրանցվել:

21) **«Բ.4.2. Հանձնված կամ վերադարձված փոխառություն, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ փոխառությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է պարտատիրոջ և պարտապանի միջև կնքված պայմանագրում նշված տոկոսադրույքը:

– **«Տվյալ տարվա սկզբում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ հունվարի 1-ի դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Փոխառության արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված և վերադարձված փոխառությունների արժույթը:

– **«Տարվա ընթացքում հանձնված փոխառության գումարը»** դաշտը կարող է չլրացվել, եթե հանձնված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Տարվա ընթացքում վերադարձված փոխառության գումարը»** դաշտը կարող է չլրացվել, եթե վերադարձված փոխառության գումարը չի գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է տվյալ պարտատիրոջ՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա փոխառության պարտքի գումարը:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

22) **«Բ.4.3. Բանկային ավանդներ»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Տվյալ տարվա սկզբում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Ավանդի արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ավանդի գումարը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

23) **«Բ.4.4. Բանկային ավանդ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Տվյալ տարվա սկզբում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

– **«Ավանդի արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում տվյալ բանկում առկա ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ավանդի գումարը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

24) **«Բ.5. ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻՑ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻՑ ԱՎԵԼԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԸ (ԹԱՆԿԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ)»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Թանկարժեք գույք է համարվում նախորդ բաժիններում չներառված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը, օրինակ՝ թանկարժեք զարդ, կահույք, արվեստի գործ, ոսկու ձուլակտորներ և այլն: Ընդ որում, չորս միլիոն դրամի շեմը վերաբերվում է տվյալ թանկարժեք գույքի միավորին կամ կոմպլեկտին, այլ ոչ թե՝ թանկարժեք գույքի տեսակին: Օրինակ, եթե հայտարարատու անձի բոլոր ոսկյա զարդերի ընդհանուր արժեքը կազմում է 6 միլիոն ՀՀ դրամ, սակայն դրանցից յուրաքանչյուրի արժեքը չի գերազանցում 4 միլիոն ՀՀ դրամը, ոսկյա զարդերը ենթակա չեն հայտարարագրման:

– Թանկարժեք գույքի արժեքը որոշվում է դրա ձեռքբերման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ սույն կարգի «Ընդհանուր դրույթներ» բաժնում նկարագրված բնամթերային եկամուտների արժեքի որոշման մեթոդով:

– **Այս բաժնում հայտարարագրվում է** նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող թանկարժեք գույքը: Օրինակ՝ հայտարարատուն տարվա ընթացքում առնվազն 90 օր օգտագործել և (կամ) տիրապետել է թանկարժեք ժամացույց, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և այդ թանկարժեք գույքը փոխանցել է օգտագործման (տիրապետման) հայտարարատուին, կամ հայտարարատուի տանը կախված է հայտնի նկարչի թանկարժեք կտավ, որը պատկանում է այլ անձի:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ թանկարժեք գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

25) **«Բ.5.1. Տվյալ տարվա սկզբում առկա՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման տարին»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի ձեռքբերման տարին:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը՝ ձեռքբերման գնով: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտը լրացվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի ձեռքբերման արժույթը:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տարեվերջին տվյալ թանկարժեք գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:

26) **«Բ.5.2. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրությունը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Նկարագրությունը» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի ձեռքբերման օրը, ամիսը, տարին:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը՝ ձեռքբերման գնով: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտում լրացվում է «0», միևնույն ժամանակ եկամուտների հայտարարագրման բաժնում որպես բնամթերային ձևով ստացված եկամուտ հայտարարագրվում է գույքի արժեքը՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի ձեռքբերման արժույթը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են թանկարժեք գույքի ձեռքբերման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Առկա է տարվա վերջում»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տարեվերջին տվյալ թանկարժեք գույքի առկայության վերաբերյալ համապատասխան տողը:

27) **«Բ.5.2. Տվյալ տարվա ընթացքում օտարված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Օտարման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է օտարման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է օտարման եղանակը:

– **«Օտարման ամսաթիվը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի օտարման օրը, ամիսը, տարին:

– **«Օտարման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի օտարման արժեքը: Անհատույց օտարման դեպքում այս դաշտում նշվում է զրո (0):

– **«Օտարման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի օտարման արժույթը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են թանկարժեք գույքի օտարման գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

28) **«Բ.5.3. Տվյալ տարվա վերջում առկա՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժինը լրացվում է ինքնաշխատ:

29) **«Բ.5.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող թանկարժեք գույք կամ այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Գինը (արժեքը)»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է թանկարժեք գույքի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

30) **«Բ.6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Սույն բաժնում հայտարարագրվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարատուի՝

- ՀՀ և արտասահմանյան բանկերում գտնվող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցները (ընթացիկ և խնայողական հաշիվների մնացորդները (բացառությամբ ժամկետային ավանդների), առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին և այլն),
- Էլեկտրոնային հաշիվներին (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO) առկա դրամական միջոցները,
- կրիպտոարժույթը,
- կանխիկ դրամական միջոցները,

– ՀՀ բանկերում միևնույն արժույթով առկա դրամական միջոցները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ հաշիվների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի դրամական միջոցների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց **«Նկարագրություն»** դաշտում պետք է նշի, թե տվյալ հաշվին որքան գումար է առկա:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև այն դրամական միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ դրամական միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

31) **«Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Գումարի չափը տվյալ տարվա սկզբում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Գումարի չափը տվյալ տարվա վերջում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

32) **«Բ.6.2. Բանկային հաշվի մնացորդ (բացառությամբ ավանդի), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ դրանից փաստացի օգուտ է ստանում** կամ այն տնօրինում է **հայտարարատուն»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Գումարի չափը տվյալ տարվա սկզբում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Գումարի չափը տվյալ տարվա վերջում»** դաշտում լրացվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Բանկային հաշիվների մնացորդների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բանկային հաշիվների մնացորդների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

33) **«Բ.6.3. Էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ»** բաժնի՝

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն):

– **«Տվյալ տարվա սկզբում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը

փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

34) **«Բ.6.4. Էլեկտրոնային հաշիվ կամ կրիպտոարժույթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ հաշվից կամ կրիպտոարժույթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն):

– **«Տվյալ տարվա սկզբում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը,

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն «Դրամական միջոցի տեսակը» դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Էլեկտրոնային հաշիվների և կրիպտոարժույթի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

35) **«Բ.6.5. Կանխիկ դրամ»** բաժնի՝

– **«Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա կանխիկ գումարի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

36) **«Բ.6.6 Կանխիկ դրամ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ կանխիկ դրամից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն»** բաժնի՝

– **«Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ դրամի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

– **«Տվյալ տարվա վերջում առկա կանխիկ դրամի չափը»** դաշտում նշվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: Այս դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, նախորդ տարվա մնացորդը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Կանխիկ դրամի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

37) **«Բ.7. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատուի անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի և այլ ներդրումների, հանձնված և վերադարձված փոխառությունների, բանկային ավանդների, թանկարժեք գույքի և դրամական միջոցների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

38) **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտները»** հայտարարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Այս բաժնում գրանցվում են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում տվյալ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները:

– Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և պարտադիր այլ վճարների:

– Եկամուտներն արտացոլվում են ըստ դրանց փաստացի ստացման: Ընդ որում՝ սույն հայտարարագրի իմաստով եկամուտ են համարվում նաև ստացված վարկերն ու փոխառությունները, գույքի վաճառքից ստացված գումարը, բնամթերային եկամուտները, ապահովագրական հատուցումները, ինչպես նաև անուղղակի ստացված եկամուտները:

– Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում մեկ կամ մի քանի աղբյուրից ստացված տվյալ տեսակի եկամուտը կամ նույն տեսակի եկամուտների հանրագումարը (նվիրատվություն, շահում, քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտ և այլն), որի արժեքը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, բացառությամբ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների: Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները կարող են հայտարարագրվել նույն աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների հետ՝ հանրագումարով:

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով ձեռքբերված գույքը հայտարարագրվում է այս բաժնում՝ որպես եկամուտ:

– Հայտարարատուի բանկային հաշիվներին հասանելի չօգտագործված վարկային գծի և օվերդրաֆթի գումարները եկամուտ չեն համարվում, քանի դեռ չեն օգտագործվել: Որպես տվյալ տարվա եկամուտ հայտարարագրվում է տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարը:

– Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրվում է սույն հավելվածի **«Ընդհանուր դրույթներ»**-ում նկարագրված կարգով:

– Բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հայտարարատուի կողմից ստացված հիփոթեքային վարկի սպասարկման համար ՀՀ Հարկային օրենսգրքի 160 հոդվածի համաձայն վերադարձվող եկամտային հարկի գումարները հայտարարագրում արտացոլվում են այն հաշվետու ժամանակահատվածում, երբ այդ գումարները փաստացի ստացվում են:

– Բանկային ավանդի տոկոսները հայտարարագրվում են ըստ փաստացի վճարման՝ անկախ նրանից՝ դրանք գումարվել են ավանդին, փոխանցվել են ընթացիկ որևէ հաշվին, թե կանխիկացվել են:

– Գործատուների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրվող փոխհատուցման վճարները (գործուղման ծախսերի հատուցման վճարները, դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները և այլն) չեն հայտարարագրվում որպես եկամուտ, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում տրվող չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

– Բանկային ավանդի դիմաց միևնույն բանկից միևնույն արժույթով ստացված տոկոսները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– Տարաժամկետ վճարման պայմանով գույքի վաճառքի գործարքներում եկամուտ է համարվում գույքի վաճառքի ամբողջ գումարը, իսկ տվյալ տարվա հունվարի 1-ի կամ դեկտեմբերի 31-ի դրությամբ գնորդից ստացման ենթակա գումարն արտացոլվում է **«Հանձնած փոխառություններ»** բաժնում որպես տրված փոխառություն:

– Բնամթերային եկամուտներն արտացոլվում են սույն կարգի **«Ընդհանուր դրույթներ»** բաժնում սահմանված կարգով:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ ստացված եկամուտների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի ստացված եկամուտների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց «Նկարագրություն» դաշտում պետք է նշի, թե ընդհանուր որքան եկամուտ է ստացվել:

39) **«Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտները»** բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Եկամտի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի տեսակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է այլ եկամտի վերաբերյալ տեղեկություններ:

– **«Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը»** դաշտում լրացվում է իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը: Օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, անծանոթ և այլն: Կողմերի միջև առկա կապի բնույթը պարտադիր է նկարագրել, եթե եկամուտ վճարողը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, հակառակ դեպքում այս դաշտում կարող է նշվել գծիկ՝ «-»: Աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում այս դաշտում կարող է լրացվել նաև **«Գործատու»**, ստացված վարկերի դեպքում՝ **«Բանկի հաճախորդ»** և այլն:

– **«Եկամտի չափը»** դաշտում լրացվում է տվյալ տարվա ընթացքում ուղղակի կամ անուղղակի ձևով ստացված եկամտի չափը: Բնամթերային եկամուտների դեպքում այս դաշտում լրացվում է «0»:

– **«Եկամտի արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի արժույթը:

– **«Բնամթերային ձևով ստացված եկամուտը»** դաշտում նշվում է բնամթերքով ստացված եկամտի չափը: Պայմանագրով չկարգավորվելու դեպքում բնամթերային եկամուտներն արտացոլվում են ստացման տարում այն ձեռք բերելու հնարավոր գնով: Հնարավոր կամ շուկայական գին է համարվում այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար կամ այն գինը, որով գույքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը համաձայն է վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը համաձայն է ձեռքբերել այդ գույքը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամուտը վճարողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է եկամուտը վճարողի հասցեն:

40) **«Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ»** բաժնի՝

– **«Վարկատուի կամ փոխատուի անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը»** դաշտում լրացվում է վարկատու կամ փոխատու իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է վարկը կամ փոխառությունը տվողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է վարկը կամ փոխառությունը տվողի հասցեն:

– **«Վարկի կամ փոխառության արժույթը»** դաշտում ընտրվում է տրվող վարկի կամ փոխառության արժույթը:

– **«Փոխառության մնացորդի չափը»** դաշտում նշվում է փոխառության մնացորդի չափը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է փոխառուի և փոխատուի միջև կնքված պայմանագրում կամ համաձայնագրում նշված տոկոսադրույքը:

– **«Փոխառության նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է ստացված փոխառության նպատակը:

– **«Վարկի մայր գումարի մնացորդի չափը»** դաշտում նշվում է վարկի մայր գումարի մնացորդի չափը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

– **«Վարկի նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է ստացվել վարկը (սպառողական վարկ, հիփոթեքային վարկ, լոմբարդային վարկ, գյուղատնտեսական վարկ և այլն):

– **«Հիփոթեքի առարկան»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի տեսակը՝ հողամաս, անհատական բնակելի տուն, բնակարան, շենք և շինություններ և այլն:

– **«Հիփոթեքի առարկայի գտնվելու վայրը»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի գտնվելու հասցեն:

41) **«Գ.2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** բաժնում լրացվում են հայտարարատուի եկամուտների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

42) **«Դ. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ԾԱԽՍԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Դ.1.-Դ.6. բաժիններում հայտարարագրման ենթակա են հաշվետու ժամանակահատվածի այն ծախսերը, որոնց միանվագ արժեքը գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 2 մլն-ի շեմ) կամ տվյալ տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է 3 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 3 մլն-ի շեմ): Նշված 6 տեսակի ծախսերից յուրաքանչյուր տեսակի համար 3 մլն-ի շեմը կիրառվում է առանձին: Օրինակ, եթե անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը (դիզայն, սալիկապատում, ներկում և այլն) առանձին-առանձին չեն գերազանցում 2 մլն-ի շեմը, սակայն դրանց հանրագումարը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 3 մլն-ի շեմը, ապա այդ ծախսերը ենթակա են հայտարարագրման:

– Դ.7.-Դ.8. բաժիններում հայտարարագրման ենթակա է Դ.1.-Դ.6. բաժիններում չնշված ցանկացած ծախս, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցել է 2 մլն-ի շեմը: Ընդ որում, գնման տվյալ առարկայի (ապրանքի,

ծառայության) դիմաց կատարվող վճարումն արհեստականորեն տրոհելը մեկից ավելի վճարումների չի ազատում տվյալ ծախսի հայտարարագրման պարտավորությունից:

– Վերը նշված շեմերից փոքր արժեքով ծախսերի հայտարարագրումը չի համարվում սույն ուղեցույցի կամ հայտարարագրի լրացման կարգի խախտում:

– Եթե հայտարարատու անձը մարում է համապատասխան շեմերը գերազանցող այլ անձանց պարտավորությունները (ուսման վարձ, վարկ, անշարժ գույքի վարձ և այլն), տվյալ գործարքը սույն ուղեցույցի իմաստով համարվում է այլ անձանց տրված նվիրատվություն և ենթակա է հայտարարագրման «Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բաժնում, բացառությամբ ի շահ հայտարարատուի ամուսնու և անչափահաս զավակների կատարվող ծախսերի, որոնք հայտարարագրվում են Դ.1.-Դ.6. բաժիններում:

– Եթե նույն տեսակի ծախսերը տարվա ընթացքում կատարվել են տարբեր արժույթներով, ապա հարկավոր է նշել ծախսի մոտավոր չափը կա՛մ արտարժույթով, կա՛մ ՀՀ դրամով: Օրինակ, եթե հանգստի համար կատարած ճանապարհածախսը կատարվել է ՀՀ դրամով, իսկ կեցության ծախսը՝ ԱՄՆ դոլարով, ապա ընդհանուր ծախսը պետք է ներկայացնել կա՛մ ՀՀ դրամով, կա՛մ ԱՄՆ դոլարով:

– Տարվա ընթացքում կատարված ծախսի հստակ արժեքը ներկայացնելու անհնարինության դեպքում, հայտարարատու անձը պետք է ներկայացնի կատարված ծախսի մոտավոր արժեքը:

– Վարկային գծի և օվերդրաֆթի մարումները կարող են չհայտարարագրվել որպես ծախս, սակայն որպես տվյալ տարվա եկամուտ հայտարարագրվում են տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարները: Միևնույն ժամանակ, տարեվերջի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի մայր գումարների չմարված մնացորդը պետք է արտացոլվի «**Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ»** բաժնում:

43) **«Դ.1. Հանգստի համար կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացվեն հանգստի մեկնելու ուղղությունը (ուղղությունները) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում հանգստի համար կատարված ճանապարհածախսի և կեցության ծախսի ընդհանուր արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է կատարված ծախսի արժույթը:

44) **«Դ.2. Շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճար»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարձակալված շարժական կամ անշարժ գույքի օբյեկտը: Հանգստի համար վարձակալված շարժական կամ անշարժ գույքը հայտարարագրվում է **«Դ.1. Հանգստի համար կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս»** բաժնում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների համար կատարված ծախսի արժույթը:

45) **«Դ.3. Ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճար»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում են կրթական հաստատության տվյալները կամ այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարների ընդհանուր չափը: Արտասահմանում կամ բնակության վայրից դուրս ուսումնառության ընթացքում կեցության համար կատարվող ծախսը, ճանապարհածախսը և այլ ծախսերը չեն համարվում ուսման վճարներ և ենթակա են հայտարարագրման միայն 2 մլն-ի շեմը գերազանցելու դեպքում՝ **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնում:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող ծախսի արժույթը:

46) **«Դ.4. Գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսեր»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացնել տարվա ընթացքում գյուղատնտեսական գործունեության հետ կապված բոլոր ծախսերի բնույթը (հողերի վար, ցանք, ոռոգում, աշխատուժի վարձակալում, կենդանիների ձեռքբերում և այլն) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերի ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսի արժույթը:

47) **«Դ.5. Վարկի մարմանն ուղղված վճարումներ»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարկի նպատակը: Եթե հայտարարատուի վարկի մարումը կատարվում է այլ անձանց կողմից, անհրաժեշտ է նշել, թե ինչ նպատակով է վարկը մարում այլ անձը (երաշխավորություն, օգնություն և այլն), ինչպես նաև՝ կապը տվյալ անձի հետ:

Յուրաքանչյուր վարկատեսակ (սպառողական, հիփոթեքային և այլն) կարող է լրացվել առանձին տողով, 3 մլն-ի շեմը կիրառվում է տվյալ հաշվետու ժամանակահատվածում բոլոր վարկերի մարմանն ուղղված վճարումների հանրագումարի նկատմամբ, այդ թվում՝ մայր գումար, տոկոսներ, տույժեր, տուգանքներ, սպասարկման վճարներ, կոմիսիոն վճարներ և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում վճարված վարկի մայր գումարի, տոկոսագումարի, այլ վճարների (հայտի ուսումնասիրություն, սպասարկում, գրավի գնահատում և այլն), տույժերի, տուգանքների ընդհանուր գումարը: Հայտարարատուի՝ այլ անձանց կողմից մարված վարկերը պետք է հայտարարագրել նաև **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտներ»** բաժնում՝ որպես անուղղակի ստացած եկամուտ:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է վարկի մարման համար կատարված ծախսի արժույթը: Տարբեր արժույթներով վարկերի դեպքում մարման համար կատարված ծախսերը պետք է ներկայացնել տվյալ արժույթով:

48) **«Դ.6. Անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսեր»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է հայտարարագրվեն անշարժ գույքի ընթացիկ և կապիտալ վերանորոգման համար կատարված ծախսերը (լոգարանի, խոհանոցի, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի համակարգերի վերանորոգումը, կենցաղային կոմունալ ջրամատակարարման, ջեռուցման կամ օդափոխման համակարգերի տեղադրումը կամ նորացումը, հերմետիկ և ջերմամեկուսիչ պատուհանների տեղադրումը, սեյսմակայունության ամրապնդումը, բնակելի տան բակային տարածքի հարդարումը (կանաչապատ տարածքի կառուցում, ասֆալտապատման աշխատանքներ և այլն) և այլն), այդ թվում՝ փաստաթղթերով չհիմնավորված:

Անշարժ գույքի կառուցման հետ կապված ծախսերը այս բաժնում չեն ներառվում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերի ընդհանուր արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսի արժույթը:

49) **«Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում են այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են գործարքի էությունը ներկայացնելու համար (նվիրատվության կամ օգնության նպատակը, ստացողը, հայտարարատուի կապը նրա հետ և այլն):

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում հայտարարագրվում են նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի արժեքը, այդ թվում՝ դրամական միջոցները, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Սույն բաժնում չեն ներառվում հայտարարագրման ենթակա անշարժ և շարժական գույքերը, բացառությամբ՝ դրամական միջոցների:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի գումարի (արժեքի) արժույթը:

50) **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ ծախսերի բնույթը, օրինակ՝ առողջության վերականգնման

համար կատարված ծախսեր, ընտանեկան խնջույքների կազմակերպման ծախսեր և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում հայտարարագրվում են 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի գումարը, որոնք ներկայացված չեն Դ.1.-Դ.7. բաժիններում:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի արժույթը:

51) **«Դ.9. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատուի ծախսերի վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք հայտարարատուն նպատակահարմար է գտնում ներկայացնել՝ հայտարարագրված ծախսերի վերաբերյալ տեղեկություններն ամբողջացնելու համար:

IV. Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու հայտարարագրի լրացման ուղեցույց

Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու հայտարարագրի՝

1) **«Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները»** բաժնում[6] լրացվում են՝

– հայտարարատու պաշտոնատար անձի անունը, ազգանունը և հայրանունը՝ ըստ անձնագրի,
– ծննդյան օրը, ամիսը, տարին՝ ըստ անձնագրի,
– զբաղեցրած պաշտոնի անվանումը,
– պաշտոնն ստանձնելու/դադարեցնելու օրը, ամիսը, տարին (լրացվում է համակարգի կողմից ինքնաշխատ),
– «Բջջային հեռախոսահամար» դաշտում առավել նպատակահարմար է նշել անձնական բջջային հեռախոսահամարը,
– «Ֆիքսված հեռախոսահամար» դաշտում նշվում է ֆիքսված հեռախոսահամարը,
– «Էլեկտրոնային փոստ» դաշտում առավել նպատակահարմար է նշել անձնական և մշտադիտարկվող էլեկտրոնային հասցեն, քանի որ այն հանդիսանում է հայտարարատուին ծանուցելու պաշտոնական միջոց, իսկ հասանելի և գործող (այդ թվում պաշտոնը դադարեցնելուց հետո գործող) էլեկտրոնային հասցե չտրամադրելու դեպքում օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթների մասին չտեղեկանալու բացասական հետևանքները կրելու է հայտարարատուն: Այս դաշտում նշվում է մեկ էլեկտրոնային փոստի հասցե,
– պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը, որտեղ պաշտոն է զբաղեցնում,
– «Անձնագրային տվյալներ» ենթաբաժնում լրացվում են հայտարարատու պաշտոնատար անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ինչպես նաև հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ

6 Այս բաժնում տվյալների մեծ մասը լրացվում է ինքնաշխատ կերպով:

հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը,

– հաշվառման հասցեն,

– «Բնակության հասցեն» ենթաբաժնում հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Այո» պատասխանը, եթե հայտարարատուի հաշվառման հասցեն նույնական է բնակության հասցեի հետ, որից հետո համակարգը ինքնաշխատ եղանակով կներբեռնի համապատասխան հասցեն «Հաշվառման հասցե» սյունակից: Եթե փաստացի բնակության հասցեն տարբեր է հաշվառման հասցեից, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Ոչ» պատասխանը, որից հետո մուտքագրի իր բնակության հասցեի տվյալները,

– Հայտարարագրի ներկայացման օրը, ամիսը, տարին (լրացվում է ինքնաշխատ՝ համակարգի կողմից):

2) **«Ա2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները»** բաժնում լրացվում են պաշտոնի ստանձնման/դադարեցման տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ հանդիսացած բոլոր անձանց տվյալները: Այս բաժնի տվյալները ինքնաշխատ ձևով բեռնվում են՝ համակարգի «Անձնական տվյալներ» բաժնում տեղադրված «Ընտանիքի կազմ» կոճակի միջոցով մուտք գործելով նախապես լրացված տվյալներից: Մասնավորապես, լրացվում են՝

– Կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ (օրինակ՝ «Անչափահաս զավակ» ընտրության դեպքում՝ դուստր, որդի, «Համատեղ բնակվող անձ»-ի դեպքում՝ եղբայր, ամուսնու մայր և այլն, «Ամուսին» ընտրության դեպքում՝ կին կամ ամուսին),

– անունը, ազգանունը և հայրանունը՝ ըստ անձնագրի,

– Ընտանիքի անդամի ծննդյան օրը, ամիսը, տարին՝ ըստ անձնագրի,

– Քաղաքացիությունը՝ բացվող ցանկից ընտրելով տարբերակներից մեկը,

– Պաշտոնը կամ աշխատանքային գործունեությունը (զբաղմունքը),

– Գործատու(ներ)ի անվանումը (առկայության դեպքում),

– Ընտանիքի անդամի անձնագրի տվյալները (պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ),

– Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը,

– հաշվառման հասցեն,

– փաստացի բնակության հասցեն: Եթե հայտարարատուի հաշվառման հասցեն նույնական է բնակության հասցեի հետ, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Այո» պատասխանը, որից հետո համակարգը ինքնաշխատ եղանակով կներբեռնի համապատասխան հասցեն «Հաշվառման հասցե» սյունակից: Եթե այն տարբեր է հաշվառման հասցեից, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Ոչ» պատասխանը, որից հետո մուտքագրի իր փաստացի բնակության հասցեի տվյալները պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ:

3) **«Ա3. Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները»** բաժնում անձնագրային տվյալներին համապատասխան լրացվում են հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ

խնամիությամբ կապված, համատեղ չբնակվող հետևյալ անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին՝

- ծնող,
- չափահաս զավակ,
- եղբայր,
- քույր,
- ամուսնու ծնող,
- ամուսնու զավակ,
- ամուսնու եղբայր
- ամուսնու քույր:

4) **Բ.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

- Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրում արտացոլվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում սահմանված կարգով:
- Այս բաժնում հայտարարագրվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող անշարժ գույքը: Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում 90 օր կամ ավելի գումարային ժամկետով բնակվել է (վարձակալական հիմունքներով կամ անհատույց) իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում7 կամ, թեև անձը փաստացի չի բնակվում իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում, սակայն բնակարանը գտնվում է նրա տիրապետման ներքո և նա կատարում է տվյալ բնակարանի պահպանմանն ուղղված գործողություններ, օրինակ, վճարում է կոմունալ վճարները, կատարում է ընթացիկ վերանորոգում և այլն:
- Հայտարարագրման ենթակա է նաև այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ անշարժ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

5) **«Բ.1.1. Անշարժ գույքը»** բաժնի՝

- **«Հայտարարատուի անունը, ազգանունը, հայրանունը»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:
- **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույքը հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

---

7 Տվյալ գույքը ենթակա չէ հայտարարագրման, եթե սեփականության իրավունքով պատկանում է հայտարարատու անձի ընտանիքի անդամին և վերջինս այդ գույքի վերաբերյալ տվյալները ներկայացրել է իր հայտարարագրում:

– **«Սեփականության իրավունքի տեսակը»** դաշտում լրացվում է՝ «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի անձինք և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, եթե տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը: Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– **«Հայտարարատուի բաժինը»** դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը իսկ ֆիզիկական անձի դեպքում ՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, գործընկեր և այլն:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– **«Անշարժ գույքը ձեռք բերելու ամսաթիվը»** դաշտում նշվում է գույքի պետական գրանցման ամսաթիվը: Կառուցվող անշարժ գույքի դեպքում (այդ թվում՝ կառուցապատողից անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) նույնպես նշվում է անշարժ գույքի պետական գրանցման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տողն ընտրելու դեպքում հարկավոր է տալ բացատրություն «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

6) **«Բ.1.2. Հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե օտարվել է հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– «**Չափման միավոր**» դաշտում, որպես կանոն, ընտրվում է «մ^2» չափման միավորը:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի սեփականատիրոջ (սեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

7) **«Բ.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում հայտարարագրվում է հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված տրանսպորտի միջոցի): Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում առնվազն 90 օր վարել է ավտոմեքենա, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և ավտոմեքենան փոխանցել է օգտագործման հայտարարատուին:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն տրանսպորտի միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտի միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

8) **«Բ.2.1. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑԸ»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տրանսպորտի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառված են կամ ենթակա են հաշվառման:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման ամսաթիվը»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման տարին: Ձեռքբերման տարի է համարվում ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը:

– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

9) **«Բ.2.2. Հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակաշրջանում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը, այն տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտային միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տրանսպորտի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան:

– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի:

– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

10) **«Բ.3. ԱՐԺԵԹՂԹԵՐ ԵՎ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների արժեքը պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ հաշվարկվում է ձեռքբերման արժեքով:

– Ներդրումային ֆոնդերի փայերը հայտարարագրվում են ընդհանուր կարգով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը չեն հայտարարագրվում:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն արժեթուղթը (բաժնեմասը), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով գրանցված է այլ անձի անունով, սակայն առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի անունից/օգտին, այսինքն՝ արժեթուղթը փաստացի ձեռք է բերվել հայտարարատու անձի համար: Հայտարարատու անձը չհանդիսանալով արժեթղթի սեփականատեր, այնուամենայնիվ ունի փաստացի հնարավորություն վերջինիս հետ կապված որոշումներ կայացնելու հարցում **կամ**

✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի հաշվին, այսինքն՝ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատու անձի դրամական կամ այլ գույքային միջոցներով, վերջինիս հաշվին **կամ**

✓ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն, այսինքն՝ թեև արժեթուղթը գրանցված է երրորդ անձի անունով, սակայն տվյալ արժեթղթից օգուտներ՝ շահաբաժնի կամ որևէ այլ ձևով, ստանում է հայտարարատու անձը **կամ**

✓ այդ արժեթուղթը փաստացի տնօրինում է հայտարարատուն, այսինքն՝ հայտարարատու անձը գույքի ճակատագիրը որոշելու հարցում ունի վճռորոշ ազդեցություն: Հայտարարատու անձի անմիջական ազդեցությամբ է արժեթղթի իրական սեփականատերը որոշում կայացնում այն վաճառելու, նվիրելու և այլնի վերաբերյալ:

– Հայտարարատուի բաժնեմասնակցությամբ ընկերության գույքի, ինչպես նաև ընկերության դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները ենթակա չեն հայտարարագրման: Հայտարարագրման ենթակա չեն նաև այն կազմակերպության գույքի, ինչպես նաև դրա դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ կազմակերպությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

11) **«Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ»** բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է արժեթղթի կամ այլ ներդրման սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ):

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է հանդիսանում հայտարարատուն, նրա ընտանիքի անչափահաս անդամը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

– **«Ձեռքբերման ամսաթիվ»** դաշտում լրացվում է արժեթղթի ձեռքբերման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը:

– **«Նկարագրություն»** դաշտը լրացվում է, եթե «Ձեռքբերման եղանակը» դաշտում ընտրվել է ձեռքբերման «Այլ» եղանակը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում լրացվում են անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս անվանումը, ինչպես նաև լրացվում է գործարքի մյուս կողմի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը»** դաշտում լրացվում է պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատու պաշտոնատար անձին, նրա անչափահաս զավակին կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ:

12) **«Բ.3.2. Բաժնային արժեթուղթ կամ այլ ներդրում, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ արժեթղթից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է հանդիսանում հայտարարատուն, նրա ընտանիքի անչափահաս անդամը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայաբաժին):

– **«Արժեքը»** դաշտում լրացվում է պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատու պաշտոնատար անձին, նրա անչափահաս զավակին կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին պատկանող

բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ:

– **«Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

13) **«Բ.3.3. Պարտքային և այլ արժեթղթեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է պարտքային և այլ արժեթղթերի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Արժեթղթի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային կամ այլ արժեթղթի տեսակը: «Այլ արժեթուղթ» տողն ընտրելու դեպքում հայտնված «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում նկարագրվում է այլ պարտքային արժեթղթի տեսակը:

– **«Ձեռքբերման ամսաթիվ»** դաշտում նշվում է արժեթղթի ձեռքբերման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժեթղթի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** և **«Արժույթը»** դաշտերում, համապատասխանաբար, լրացվում է արժեթղթերի ձեռքբերման արժեքը և արժույթը:

14) **«Բ.3.4. Պարտքային կամ այլ արժեթուղթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային և այլ արժեթղթերի տեսակը:

– **«Արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա պարտքային և այլ արժեթղթի ձեռքբերման արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ արժեթղթի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Պարտքային և այլ արժեթղթերի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է պարտքային և այլ արժեթղթերի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

15) **«Բ.4. ՀԱՆՁՆՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Հայտարարագրվում են պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի հանձնած փոխառությունները և ներդրված բանկային ավանդների գումարները: Սույն հավելված առումով բանկային ավանդ է համարվում բանկի հետ ժամկետային ավանդի պայմանագրի շրջանակներում որոշակի ժամկետով ներդրված ավանդը, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով սահմանված տոկոսներ:

– Ցպահանջ ավանդները, խնայողական հաշիվների մնացորդները, առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին արտացոլվում են «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում:

– Հայտարարագրվում է մինչև անշարժ գույքի պետական գրանցումը կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց վճարված գումարների մնացորդը (այդ թվում՝ վարկային միջոցներից) պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից հետո այս փոխառության մնացորդը մարվում է (զրոյանում է):

– Այս բաժնում լրացվում են նաև գույքի (անշարժ գույք, տրանսպորտի միջոց, արժեթղթեր և այլ ներդրումներ, թանկարժեք գույք) ձեռքբերման պայմանագրի շրջանակներում փաստացի վճարված կանխավճարի և նախավճարի գումարները, որոնք առկա են պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– Այս բաժնում հայտարարագրվում է այն փոխառությունը կամ ավանդը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ փոխառությունից կամ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

16) **«Բ.4.1. Հանձնված փոխառություններ»** բաժնի՝

– **«Պարտատիրոջ կարգավիճակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Հայտարարատու պարտատիրոջ տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է փոխատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Փոխառության գումարը»** դաշտում լրացվում է պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Փոխառության արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված փոխառության արժույթը:

– **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտում նշվում են այն փոխառությունների տվյալները, որոնք վերաբերվում են գույքի նախնական առուվաճառքի պայմանագրերով փաստացի վճարված գումարներին կամ գույքի ձեռքբերման պայմանագրերի շրջանակներում հիփոթեքային պայմանագրերով փաստացի վճարված գումարներին, եթե հայտարարատուի սեփականության իրավունքը դեռևս չի գրանցվել:

– **«Պարտապանի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են պարտապան հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է փոխատուի (պարտատիրոջ) և փոխառուի (պարտապանի) միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ ձեռքբերվող բնակարանի կառուցապատող, եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում լրացվում է տրված փոխառության տոկոսադրույքը, իսկ անտոկոս փոխառության (այդ թվում՝ տրված կանխավճարի, նախավճարի, տարաժամկետ վճարման պայմանով գույքի վաճառքի դեպքում լրացվող փոխառության և այլ) դեպքում՝ զրո:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է երկիրը, որի քաղաքացի է հանդիսանում պարտապանը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է պարտապանի հասցեն:

17) **«Բ.4.2. Հանձնված կամ վերադարձված փոխառություն, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ փոխառությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է պարտատիրոջ և պարտապանի միջև կնքված պայմանագրում նշված տոկոսադրույքը:

– **«Պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ առկա փոխառության գումարը»** դաշտում լրացվում է պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Փոխառության արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված փոխառության արժույթը:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

18) **«Բ.4.3. Բանկային ավանդներ»** բաժնի՝

– **«Պարտատիրոջ կարգավիճակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը:

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է ավանդատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Ավանդի արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

– **«Բանկի անվանումը»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

19) **«Բ.4.4. Բանկային ավանդ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Բանկի անվանումը»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Ավանդի արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

20) **«Բ.5. ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻՑ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻՑ ԱՎԵԼԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԸ (ԹԱՆԿԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ)»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Թանկարժեք գույք է համարվում նախորդ բաժիններում չներառված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը,

օրինակ՝ թանկարժեք զարդ, կահույք, արվեստի գործ, ոսկու ձուլակտորներ և այլն: Ընդ որում, չորս միլիոն դրամի շեմը վերաբերվում է տվյալ թանկարժեք գույքի միավորին կամ հավաքածուին, այլ ոչ թե՝ թանկարժեք գույքի տեսակին: Օրինակ, եթե հայտարարատու անձի բոլոր ոսկյա զարդերի ընդհանուր արժեքը կազմում է 6 միլիոն ՀՀ դրամ, սակայն դրանցից յուրաքանչյուրի արժեքը չի գերազանցում 4 միլիոն ՀՀ դրամը, ոսկյա զարդերը ենթակա չեն հայտարարագրման:

– Թանկարժեք գույքի արժեքը որոշվում է դրա ձեռքբերման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում նկարագրված բնամթերային եկամուտների արժեքի որոշման մեթոդով:

– **Այս բաժնում հայտարարագրվում է** նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող թանկարժեք գույքը: Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում առնվազն 90 օր օգտագործել և (կամ) տիրապետել է թանկարժեք ժամացույց, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և այդ թանկարժեք գույքը փոխանցել է օգտագործման (տիրապետման) հայտարարատուին, կամ հայտարարատուի տանը կախված է հայտնի նկարչի թանկարժեք կտավ, որը պատկանում է այլ անձի:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ թանկարժեք գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

21) **«Բ.5.1. Չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է թանկարժեք գույքի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Թանկարժեք գույքի նկարագրություն» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման տարին»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի ձեռքբերման տարին:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը՝ ձեռքբերման գնով: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտը լրացվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի ձեռքբերման արժույթը:

22) **«Բ.5.2. Հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակաշրջանում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող թանկարժեք գույքը կամ այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք**

է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրությունը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Գինը (արժեքը)»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է թանկարժեք գույքի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

23) **«Բ.6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Սույն բաժնում հայտարարագրվում են հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի՝

- ՀՀ և արտասահմանյան բանկերում գտնվող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցները (ընթացիկ և խնայողական հաշիվների մնացորդները (բացառությամբ ժամկետային ավանդների), առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին և այլն),
- Էլեկտրոնային հաշիվներին (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO) առկա դրամական միջոցները,
- կրիպտոարժույթը,
- կանխիկ դրամական միջոցները:

– ՀՀ բանկերում միևնույն արժույթով առկա դրամական միջոցները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ հաշիվների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի դրամական միջոցների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց «Նկարագրություն» դաշտում պետք է նշի, թե տվյալ հաշվին որքան գումար է առկա:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև այն դրամական միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ դրամական միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

24) **«Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է բանկային հաշիվների սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Բանկի անվանումը»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Գումարը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

25) **«Բ.6.2. Բանկային հաշվի մնացորդ (բացառությամբ ավանդի), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ դրանից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Բանկի անվանումը»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Գումարը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման

աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Բանկային հաշիվների մնացորդների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բանկային հաշիվների մնացորդների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

26) **«Բ.6.3. Էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է էլեկտրոնային հաշիվների և կրիպտոարժույթի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն),

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն «Դրամական միջոցի տեսակը» դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

27) **«Բ.6.4 Էլեկտրոնային հաշիվ կամ կրիպտոարժույթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ հաշվից կամ կրիպտոարժույթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն):

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն «Դրամական միջոցի տեսակը» դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Էլեկտրոնային հաշիվների և կրիպտոարժույթի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

28) **«Բ.6.5. Կանխիկ դրամ»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է կանխիկ դրամի սեփականատեր հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ

արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

29) **«Բ.6.6. Կանխիկ դրամ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ կանխիկ դրամից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Կանխիկ դրամի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

30) **«Բ.7. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատուի անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի և այլ ներդրումների, հանձնված և վերադարձված փոխառությունների, բանկային ավանդների, թանկարժեք գույքի և դրամական միջոցների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

31) **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»** հայտարարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում գրանցվում են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները:

– Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և պարտադիր այլ վճարների:

– Եկամուտներն արտացոլվում են ըստ դրանց փաստացի ստացման՝ անկախ նրանից, թե որ ժամանակահատվածին են դրանք վերաբերվում: Ընդ որում, սույն հայտարարագրի իմաստով եկամուտ են համարվում նաև ստացված վարկերն ու փոխառությունները, գույքի վաճառքից ստացված գումարը, բնամթերային եկամուտները, ապահովագրական հատուցումները, ինչպես նաև անուղղակի ստացված եկամուտները:

– Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում մեկ կամ մի քանի աղբյուրից ստացված տվյալ տեսակի եկամուտը կամ նույն տեսակի եկամուտների հանրագումարը (նվիրատվություն, շահում, քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտ և այլն), որի արժեքը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, բացառությամբ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների: Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները կարող են հայտարարագրվել նույն աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների հետ՝ հանրագումարով:

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով ձեռքբերված գույքը հայտարարագրվում է այս բաժնում՝ որպես եկամուտ:

– Հայտարարատուի բանկային հաշիվներին հասանելի չօգտագործված վարկային գծի և օվերդրաֆթի գումարները եկամուտ չեն համարվում, քանի դեռ չեն օգտագործվել: Որպես եկամուտ հայտարարագրվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարը:

– Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ»-ում նկարագրված կարգով:

– Բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հայտարարատուի կողմից ստացված հիփոթեքային վարկի սպասարկման համար ՀՀ Հարկային օրենսգրքի 160 հոդվածի համաձայն վերադարձվող եկամտային հարկի գումարները հայտարարագրում արտացոլվում են, եթե դրանք փաստացի ստացվել են հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում:

– Բանկային ավանդի տոկոսները հայտարարագրվում են ըստ փաստացի վճարման՝ անկախ նրանից՝ դրանք գումարվել են ավանդին, փոխանցվել են ընթացիկ որևէ հաշվին, թե կանխիկացվել են:

– Գործատուների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրվող փոխհատուցման վճարները (գործուղման ծախսերի հատուցման վճարները, դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները և այլն) չեն հայտարարագրվում որպես եկամուտ, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում տրվող չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

– Բանկային ավանդի դիմաց միևնույն բանկից միևնույն արժույթով ստացված տոկոսները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– Տարաժամկետ վճարման պայմանով գույքի վաճառքի գործարքներում եկամուտ է համարվում գույքի վաճառքի ամբողջ գումարը, իսկ հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա

դրությամբ գնորդից ստացման ենթակա գումարն արտացոլվում է «Հանձնած փոխառություններ» բաժնում որպես տրված փոխառություն:

– Բնամթերային եկամուտներն արտացոլվում են սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում սահմանված կարգով:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ ստացված եկամուտների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի ստացված եկամուտների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց «Նկարագրություն» դաշտում պետք է նշի, թե ընդհանուր որքան եկամուտ է ստացվել:

32) **«Գ.1.1. Հաշվետու ժամանակահատվածի եկամուտները»** բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Եկամուտ ստացողի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Եկամտի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի տեսակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է այլ եկամտի վերաբերյալ տեղեկություններ:

– **«Վճարողի անվանում կամ անուն ազգանուն հայրանուն»** դաշտում լրացվում է իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը: Օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, անծանոթ և այլն: Կողմերի միջև առկա կապի բնույթը պարտադիր է նկարագրել, եթե եկամուտ վճարողը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, հակառակ դեպքում այս դաշտում կարող է նշվել գծիկ՝ «-»: Աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում այս դաշտում կարող է լրացվել նաև **«Գործատու»**, ստացված վարկերի դեպքում՝ **«Բանկի հաճախորդ»** և այլն:

– **«Եկամտի չափը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում ուղղակի կամ անուղղակի ձևով ստացված եկամտի չափը: Բնամթերային եկամուտների դեպքում այս դաշտում լրացվում է «0»:

– **«Եկամտի արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի արժույթը:

– **«Բնամթերային ձևով ստացված եկամտի արժեքը»** դաշտում նշվում է բնամթերքով ստացված եկամտի չափը: Պայմանագրով չկարգավորվելու դեպքում բնամթերային եկամուտներն արտացոլվում են ստացման տարում այն ձեռք բերելու հնարավոր գնով: Հնարավոր կամ շուկայական գին է համարվում այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար կամ այն գինը, որով գույքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը համաձայն է վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը համաձայն է ձեռք բերել այդ գույքը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամուտը վճարողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում լրացվում է եկամուտ վճարողի հասցեն:

33) **«Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ»** բաժնի՝

– **«Վարկատուի կամ փոխատուի անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը»** դաշտում լրացվում է վարկատու կամ փոխատու իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է վարկը կամ փոխառությունը տվողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է վարկը կամ փոխառությունը տվողի հասցեն:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է տրվող վարկի կամ փոխառության արժույթը:

– **«Փոխառության մնացորդի չափը»** դաշտում նշվում է փոխառության մնացորդի չափը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է փոխառուի և փոխատուի միջև կնքված պայմանագրում կամ համաձայնագրում նշված տոկոսադրույքը:

– **«Փոխառության նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է ստացված փոխառության նպատակը:

– **«Վարկի մայր գումարի մնացորդի չափը»** դաշտում նշվում է վարկի մայր գումարի մնացորդի չափը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Վարկի նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է ստացվել վարկը (սպառողական վարկ, հիփոթեքային վարկ, լոմբարդային վարկ, գյուղատնտեսական վարկ և այլն):

– **«Հիփոթեքի առարկան»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի տեսակը՝ հողամաս, անհատական բնակելի տուն, բնակարան, շենք և շինություններ և այլն:

– **«Հիփոթեքի առարկայի գտնվելու վայրը»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի գտնվելու հասցեն:

34) **«Գ.2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** բաժնում լրացվում են հայտարարատուի եկամուտների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

35) **«Դ. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ, ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԾԱԽՍԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Դ.1.-Դ.6. բաժիններում հայտարարագրման ենթակա են հաշվետու ժամանակահատվածի այն ծախսերը, որոնց միանվագ արժեքը գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 2 մլն-ի շեմ) կամ տվյալ տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է 3 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 3 մլն-ի շեմ): Նշված 6 տեսակի ծախսերից յուրաքանչյուր տեսակի համար 3 մլն-ի շեմը կիրառվում է առանձին: Օրինակ, եթե անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը (դիզայն, սալիկապատում, ներկում և այլն) առանձին-առանձին չեն գերազանցում 2 մլն-ի շեմը, սակայն դրանց հանրագումարը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 3 մլն-ի շեմը, ապա այդ ծախսերը ենթակա են հայտարարագրման:

– Դ.7.-Դ.8. բաժիններում հայտարարագրման ենթակա է Դ.1.-Դ.6. բաժիններում չնշված ցանկացած ծախս, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցել է 2 մլն-ի շեմը: Ընդ որում, գնման տվյալ առարկայի (ապրանքի, ծառայության) դիմաց կատարվող վճարումն արհեստականորեն տրոհելը մեկից ավելի վճարումների չի ազատում տվյալ ծախսի հայտարարագրման պարտավորությունից:

– Վերը նշված շեմերից փոքր արժեքով ծախսերի հայտարարագրումը չի համարվում սույն ուղեցույցի կամ հայտարարագրի լրացման կարգի խախտում:

– Եթե հայտարարատու անձը մարում է համապատասխան շեմերը գերազանցող այլ անձանց պարտավորությունները (ուսման վարձ, վարկ, անշարժ գույքի վարձ և այլն), տվյալ գործարքը սույն ուղեցույցի իմաստով համարվում է այլ անձանց տրված նվիրատվություն և ենթակա է հայտարարագրման «Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բաժնում, բացառությամբ ի շահ հայտարարատուի ամուսնու և անչափահաս զավակների կատարվող ծախսերի, որոնք հայտարարագրվում են Դ.1.-Դ.6. բաժիններում:

– Եթե նույն տեսակի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կատարվել են տարբեր արժույթներով, ապա հարկավոր է նշել ծախսի մոտավոր չափը կա՛մ արտարժույթով, կա՛մ ՀՀ դրամով: Օրինակ, եթե հանգստի համար կատարած ճանապարհածախսը կատարվել է ՀՀ դրամով, իսկ կեցության ծախսը՝ ԱՄՆ դոլարով, ապա ընդհանուր ծախսը պետք է ներկայացնել կա՛մ ՀՀ դրամով, կա՛մ ԱՄՆ դոլարով:

– Հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսի հստակ արժեքը ներկայացնելու անհնարինության դեպքում, հայտարարատու անձը պետք է ներկայացնի կատարված ծախսի մոտավոր արժեքը:

– Պաշտոնական պարտականությունների ստանձնման հայտարարագրում ծախսերի վերաբերյալ տվյալներ չեն հայտարարագրվում: Պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրը կատարած ծախսերը:

– Վարկային գծի և օվերդրաֆթի մարումները կարող են չհայտարարագրվել որպես ծախս, սակայն որպես տվյալ հաշվետու ժամանակահատվածի եկամուտ հայտարարագրվում են պաշտոնի դադարեցման օրվա դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարները: Միևնույն ժամանակ, տարեվերջի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի մայր գումարների չմարված մնացորդը պետք է արտացոլվի «**Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ»** բաժնում:

36) **«Դ.1. Հանգստի համար կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացվեն հանգստի մեկնելու ուղղությունը (ուղղությունները) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ հաշվետու ժամանակահատվածում հանգստի համար կատարված ճանապարհածախսի և կեցության ծախսի ընդհանուր արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է կատարված ծախսի արժույթը:

37) **«Դ.2. Շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճար»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարձակալված շարժական կամ անշարժ գույքի օբյեկտը: Հանգստի համար վարձակալված շարժական կամ անշարժ գույքը հայտարարագրվում է **«Դ.1. Հանգստի համար կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս»** բաժնում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների համար կատարված ծախսի արժույթը:

38) **«Դ.3. Ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճար»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում են կրթական հաստատության տվյալները կամ այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ հաշվետու ժամանակահատվածում ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող գումարների ընդհանուր չափը: Արտասահմանում կամ բնակության վայրից դուրս ուսումնառության ընթացքում կեցության համար կատարվող ծախսը, ճանապարհածախսը և այլ ծախսերը չեն համարվում ուսման վճարներ և ենթակա են հայտարարագրման միայն 2 մլն-ի շեմը գերազանցելու դեպքում՝ **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնում:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող ծախսի արժույթը:

39) **«Դ.4. Գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսական գործունեության հետ կապված բոլոր ծախսերի բնույթը (հողերի վար, ցանք, ոռոգում, աշխատուժի վարձակալում, կենդանիների ձեռքբերում և այլն) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերի ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսի արժույթը:

40) **«Դ.5. Վարկի մարմանն ուղղված վճարումներ»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարկի նպատակը: Եթե պաշտոնատար անձի վարկի մարումը կատարվում է այլ անձանց կողմից, անհրաժեշտ է նշել, թե ինչ նպատակով է վարկը մարում այլ անձը, (երաշխավորություն, օգնություն և այլն), ինչպես նաև՝ կապը տվյալ անձի հետ:

Յուրաքանչյուր վարկատեսակ (սպառողական, հիփոթեքային և այլն) կարող է լրացվել առանձին տողով, 3 մլն-ի շեմը կիրառվում է տվյալ հաշվետու ժամանակահատվածում բոլոր վարկերի մարմանն ուղղված վճարումների հանրագումարի նկատմամբ, այդ թվում՝ մայր գումար, տոկոսներ, տույժեր, տուգանքներ, սպասարկման վճարներ, կոմիսիոն վճարներ և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում վճարված վարկի մայր գումարի, տոկոսագումարի, այլ վճարների (հայտի ուսումնասիրություն, սպասարկում, գրավի գնահատում և այլն), տույժերի, տուգանքների ընդհանուր գումարը: Հայտարարատու պաշտոնատար անձի՝ այլ անձանց կողմից մարված վարկերը պետք է հայտարարագրել նաև **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները»** բաժնում՝ որպես անուղղակի ստացած եկամուտ:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է վարկի մարման համար կատարված ծախսի արժույթը: Տարբեր արժույթներով վարկերի դեպքում մարման համար կատարված ծախսերը պետք է ներկայացնել տվյալ արժույթով:

41) **«Դ.6. Անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է հայտարարագրվեն անշարժ գույքի ընթացիկ և կապիտալ վերանորոգման համար կատարված ծախսերը (լոգարանի, խոհանոցի, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի համակարգերի վերանորոգումը, կենցաղային կոմունալ ջրամատակարարման, ջեռուցման կամ օդափոխման համակարգերի տեղադրումը կամ նորացումը, հերմետիկ և ջերմամեկուսիչ պատուհանների տեղադրումը, սեյսմակայունության ամրապնդումը, բնակելի տան բակային տարածքի հարդարումը (կանաչապատ տարածքի կառուցում,

ասֆալտապատման աշխատանքներ և այլն) և այլն), այդ թվում՝ փաստաթղթերով չհիմնավորված:

Անշարժ գույքի կառուցման հետ կապված ծախսերը այս բաժնում չեն ներառվում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերի ընդհանուր արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսի արժույթը:

42) **«Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում հայտարարագրվում են նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի արժեքը, այդ թվում՝ դրամական միջոցները, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Սույն բաժնում չեն ներառվում հայտարարագրման ենթակա անշարժ և շարժական գույքերը, բացառությամբ՝ դրամական միջոցների:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի գումարի (արժեքի) արժույթը:

43) **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի, նրա անչափահաս զավակի կամ նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ ծախսերի բնույթը, օրինակ՝ առողջության վերականգնման համար կատարված ծախսեր, ընտանեկան խնջույքների կազմակերպման ծախսեր և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում հայտարարագրվում են 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի գումարը, որոնք ներկայացված չեն Դ.1.-Դ.7. բաժիններում:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի արժույթը:

44) **«Դ.9. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների ծախսերի վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք հայտարարատուն նպատակահարմար է գտնում

ներկայացնել՝ հայտարարագրված ծախսերի վերաբերյալ տեղեկություններն ամբողջացնելու համար:

45) **«Ե. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՇԱՀԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ»** բաժինը ներառում է՝

46) **«Ե.1.Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նա և (կամ) իր ընտանիքի անդամները ներկայացված են եղել հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում:

Այս բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի այն անդամի անունը, ազգանունը, հայրանունը, որը ներկայացված է տվյալ առևտրային կազմակերպության կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում (մասնակիցների ընդհանուր ժողովի անդամ, գործադիր մարմնի ղեկավար, վերստուգող հանձնաժողովի անդամ և այլն):

– **«Կազմակերպության անվանումը»** դաշտում լրացվում է այն առևտրային կազմակերպության անվանումը, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված են եղել հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) իր ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում:

– **«Հարկ վճարողի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է այն առևտրային կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) իր ընտանիքի անդամները:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կազմակերպության գտնվելու երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է կազմակերպության գտնվելու հասցեն:

– **«Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամների կարգավիճակը կազմակերպությունում»** դաշտում լրացվում է, թե տվյալ առևտրային կազմակերպությունում ինչ ներկայացվածություն ունի հայտարարատու պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը:

47) **«Ե.2. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն կազմակերպությունների տվյալները, որոնցում նա և (կամ) իր ընտանիքի

անդամները մասնակցություն են ունեցել հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում:

Այս բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի այն անդամի անունը, ազգանունը, հայրանունը, որն առևտրային կազմակերպությունում հիմնադիր է հանդիսանում կամ այդ կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցություն ունի:

– **«Կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) տոկոսը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի ունեցած մասնակցության տոկոսը պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ,

– **«Կազմակերպությունում ունեցած մասնակցության ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու ամսաթիվը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի կողմից տվյալ կազմակերպությունում ունեցած մասնակցության ձեռքբերման ամսաթիվը: Եթե տվյալ կազմակերպության փայերի, բաժնետոմսերի կամ բաժնեմասերի ձեռքբերման մեկից ավելի գործարքներ են տեղի ունեցել, այս դաշտում նշվում է ամենավաղ ձեռքբերման ամսաթիվը,

– **«Կազմակերպության անվանումը»** դաշտում նշվում է այն առևտրային կազմակերպության անվանումը, որտեղ հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում մասնակցություն են ունեցել հայտարարատու պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը,

– **«Կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)»** դաշտում լրացվում է տվյալ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը,

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կազմակերպության գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է կազմակերպության գտնվելու հասցեն:

48) **«Ե.3. Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց կանոնադրական կապիտալում նա և (կամ) իր ընտանիքի անդամները ունեցել են մասնակցություն հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն

ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում:

Այս բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Կազմակերպության անվանումը, որի նկատմամբ պաշտոնատար անձի գույքային իրավունքը հանձնվել է հավատարմագրային կառավարման»** դաշտում լրացվում է կազմակերպության լրիվ անվանումը,

– **«Հավատարմագրային կառավարչի անվանումը կամ անուն, ազգանունը»** դաշտում լրացվում է կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը և ազգանունը, որին հավատարմագրային կառավարման է հանձնվել բաժնետոմսերը, բաժնեմասը կամ փայաբաժինը,

– **«Հավատարմագրային կառավարչի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)»** դաշտում լրացվում է հավատարմագրային կառավարչի հարկ վճարողի հաշվառման համարը, եթե այն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր,

– **«Հավատարմագրային կառավարչի հարկ վճարողի հանրային ծառայությունների համարանիշը»** դաշտում լրացվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հավատարմագրային կառավարչի հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ),

– **«Հավատարմագրային կառավարչի անձնագրի տվյալները»** դաշտում լրացվում են հավատարմագրային կառավարչի անձնագրային տվյալները,

– **«Հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման ամսաթիվ»** դաշտում լրացվում է հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման ամսաթիվը, իսկ եթե հավատարմագրային կառավարման հանձնման ամսաթիվ տարբերվում է դրանից, ապա՝ հավատարմագրային կառավարման հանձնման ամսաթիվը,

– **«Հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության ժամկետը»** դաշտում լրացվում է հավատարմագրային կառավարման պայմանագրի ավարտի ժամկետը,

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է հավատարմագրային կառավարչի գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է հավատարմագրային կառավարչի գտնվելու հասցեն:

49) **«Ե.4. Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է բոլոր այն ոչ առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց նա անդամակցում է կամ որոնց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նա ներկայացված է եղել հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում:

Այս բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Կազմակերպության անվանումը»** դաշտում լրացվում է այն ոչ առևտրային կազմակերպությունների տվյալները, որոնց նա անդամակցել է կամ որոնց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նա ներկայացված է

եղել հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում,

– **«Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)»** դաշտում լրացվում է ոչ առևտրային կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը,

– **«Կազմակերպությունում հայտարարատուի կարգավիճակը»** դաշտում լրացվում է, թե տվյալ ոչ առևտրային կազմակերպությունում ինչ ներկայացվածություն է ունեցել հայտարարատու պաշտոնատար անձը հաշվետու ժամանակահատվածում (անդամ, գործադիր մարմնի ղեկավար, հոգաբարձուների խորհրդի անդամ և այլն),

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու հասցեն:

50) **«Ե.5. Հայտարարատուի անդամակցությունը կուսակցություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է այն կուսակցության տվյալները, որին նա անդամակցել է պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում և նշում է իր ներկայացվածությունը կուսակցության կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում:

Այս բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Կուսակցության անվանումը»** դաշտում լրացվում է այն կուսակցության անվանումը, որին անդամակցել է հայտարարատու պաշտոնատար անձը՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում,

– **«Կուսակցությունում անձի կարգավիճակը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի կարգավիճակը կուսակցությունում, նրա ներկայացվածությունը կուսակցության ղեկավար մարմիններում:

51) **«Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Հայտարարատու պաշտոնատար անձը հայտարարագրում է իր, իր ընտանիքի անդամների և նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ կնքված այն պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և որոնք գործել են հայտարարատու

պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում: Պայմանագիրը ենթակա չէ հայտարարագրման, եթե Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունում հայտարարատու պաշտոնատար անձի և իր ընտանիքի անդամների մասնակցության հանրագումարը չի գերազանցում 1 (մեկ) տոկոսը,

– Այս բաժնում հայտարարագրվում են նաև այն պայմանագրերը, որոնց արժեքը սահմանված է միավոր ապրանքի կամ ծառայության համար և որոնց շրջանակներում պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում փաստացի վճարված գումարը գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը»:

Այս բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Պաշտոն զբաղեցնող անձը, նրա ընտանիքի անդամը և (կամ) նրա(նց) մասնակցությամբ կազմակերպությունը, որի հետ կնքվել է պայմանագիր»** դաշտում լրացվում են պետության կամ համայնքի հետ կնքված պայմանագրի կողմ հանդիսացող անձի անունը և ազգանունը կամ անվանումը,

– **«Պայմանագրի տեսակը»** դաշտում լրացվում է պետության կամ համայնքի հետ կնքված պայմանագրի տեսակը (ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման և այլն),

– **«Պայմանագրի առարկան»** դաշտում լրացվում է պայմանագրով սահմանված գործարքի համառոտ նկարագրությունը,

– **«Պայմանագրի կողմը/կողմերը»** դաշտում լրացվում է պայմանագրի կողմ հանդիսացող պետական մարմնի կամ համայնքի անվանումը,

– **«Տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին»** դաշտում լրացվում է, թե գնման կամ վաճառքի ինչ գործընթացի շրջանակներում է կնքվել պայմանագիրը (բաց մրցույթ, մեկ անձ, աճուրդ),

– **«Պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին»** դաշտում լրացվում է պայմանագրի կնքման օրը, ամիսը և տարին,

– **«Գործողության ժամկետը»** դաշտում նշվում է պայմանագրի գործողության ժամկետի ավարտի ամսաթիվը: Անժամկետ պայմանագրի դեպքում այս դաշտը չի լրացվում,

– **«Գինը (արժեքը)/ՀՀ դրամ»** դաշտում լրացվում է պայմանագրով սահմանված արժեքը: Եթե պայմանագրով սահմանված է ոչ թե արժեքը, այլ արժեքի որոշման ձևը, ապա նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում փաստացի վճարված գումարի չափը,

– **«Փաստացի վճարված գումարն ըստ պայմանագրի/ ՀՀ դրամ»** դաշտում լրացվում է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի հետ կնքված պայմանագրի շրջանակներում հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում փաստացի վճարված գումարի չափը, եթե պայմանագրով սահմանված է ոչ թե դրա ընդհանուր արժեքը, այլ արժեքի որոշման ձևը (օրինակ՝ միավոր ծառայության արժեքը) և հաշվետու ժամանակահատվածում փաստացի վճարված գումարը գերազանցել է հինգ

միլիոն ՀՀ դրամը: Պայմանագրի ընդհանուր արժեքը սահմանված լինելու դեպքում այս դաշտը կարող է չլրացվել (լրացվում է «Գինը (արժեքը)» դաշտը):

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու երկիրը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է ոչ առևտրային կազմակերպության գտնվելու հասցեն:

52) **«Ե.7. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների շահերի վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

V. Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի՝ պաշտոնի ստանձնման/դադարեցման հայտարարագրի լրացման ուղեցույց

Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի՝ պաշտոնի ստանձնման/դադարեցման հայտարարագրի՝

1) **«Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի տվյալները»** բաժնում լրացվում են՝

– անունը, ազգանունը և հայրանունը՝ ըստ անձնագրի,

– ծննդյան օրը, ամիսը, տարին՝ ըստ անձնագրի,

– Հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը,

– հաշվառման հասցեն,

– փաստացի բնակության հասցեն: Եթե հայտարարատուի հաշվառման հասցեն նույնական է բնակության հասցեի հետ, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Այո» պատասխանը, որից հետո համակարգը ինքնաշխատ եղանակով կներբեռնի համապատասխան հասցեն «Հաշվառման հասցե» սյունակից: Եթե այն տարբեր է հաշվառման հասցեից, ապա հայտարարատուն պետք է սեղմի «Նույնն է ինչ հաշվառմանը» դաշտի վրա և ընտրի «Ոչ» պատասխանը, որից հետո մուտքագրի իր բնակության հասցեի տվյալները,

– պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը, որտեղ պաշտոն է զբաղեցնում պաշտոնատար անձը,

– պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնի անվանումը,

– պաշտոնատար անձի՝ պաշտոնն ստանձնելու/դադարեցնելու օրը, ամիսը, տարին (լրացվում է համակարգի կողմից ինքնաշխատ),

– Էլեկտրոնային փոստի հասցե (առավել նպատակահարմար է նշել անձնական և մշտադիտարկվող էլեկտրոնային հասցեն, քանի որ այն հանդիսանում է հայտարարատուին ծանուցելու պաշտոնական միջոց, իսկ հասանելի և գործող էլեկտրոնային հասցե չտրամադրելու դեպքում օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթների մասին չտեղեկանալու բացասական հետևանքները կրելու է հայտարարատուն): Այս դաշտում նշվում է մեկ էլեկտրոնային փոստի հասցե:

– «Բջջային հեռախոսահամար» դաշտում առավել նպատակահարմար է նշել անձնական բջջային հեռախոսահամարը,

– «Ֆիքսված հեռախոսահամար» դաշտում նշվում է ֆիքսված հեռախոսահամարը,

– Հայտարարագրի ներկայացման օրը, ամիսը, տարին (լրացվում է ինքնաշխատ՝ համակարգի կողմից):

2) **«Բ.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրում արտացոլվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում սահմանված կարգով:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող անշարժ գույքը: Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում 90 օր կամ ավելի գումարային ժամկետով բնակվել է (վարձակալական հիմունքներով կամ անհատույց) իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում8 կամ, թեև անձը փաստացի չի բնակվում իրեն սեփականության իրավունքով չպատկանող բնակարանում, սակայն բնակարանը գտնվում է նրա տիրապետման ներքո և նա կատարում է տվյալ բնակարանի պահպանմանն ուղղված գործողություններ, օրինակ, վճարում է կոմունալ վճարները, կատարում է ընթացիկ վերանորոգում և այլն:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ անշարժ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

3) **«Բ.1.1. Անշարժ գույքը»** բաժնի՝

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույքը հաշվառված է մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Սեփականության իրավունքի տեսակը»** դաշտում լրացվում է՝ «Միանձնյա» տողը, եթե տվյալ անշարժ գույքի միավորը սեփականատիրոջ միանձնյա սեփականությունն է հանդիսանում: «Բաժնային սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, երբ տվյալ գույքի սեփականատեր են հանդիսանում մեկից ավելի անձինք և նրանցից յուրաքանչյուրի բաժինն առանձնացված է (օրինակ 1/3, 1/5 և այլն): «Համատեղ սեփականություն» տողն ընտրվում է այն դեպքում, եթե տվյալ գույքը հանդիսանում է երկու կամ ավելի անձանց ընդհանուր համատեղ սեփականությունը:

---

8 Տվյալ գույքը ենթակա չէ հայտարարագրման, եթե սեփականության իրավունքով պատկանում է հայտարարատու անձի ընտանիքի անդամին և վերջինս այդ գույքի վերաբերյալ տվյալները ներկայացրել է իր հայտարարագրում:

Այս դեպքում սեփականատերերի բաժինն առանձնացված չէ և գույքը հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

– **«Հայտարարատուի բաժինը»** դաշտը լրացվում է միայն այն դեպքում, եթե «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ բաժինը»** դաշտում լրացվում է (են) տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) բաժին(ներ)ը: Այս դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ «Սեփականության իրավունքի տեսակը» տողում լրացված է «Բաժնային» տողը:

– **«Համասեփականատիրոջ տվյալները»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի համասեփականատիրոջ (համասեփականատերերի) անվանումը իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, գործընկեր և այլն:

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– **«Անշարժ գույքը ձեռք բերելու տարին»** դաշտում նշվում է գույքի պետական գրանցման ամսաթիվը: Կառուցվող անշարժ գույքի դեպքում (այդ թվում՝ կառուցապատողից անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) նույնպես նշվում է անշարժ գույքի պետական գրանցման ամսաթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տողն ընտրելու դեպքում հարկավոր է տալ բացատրություն «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

4) **«Բ.1.2. Հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ այն անշարժ գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Անշարժ գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է անշարժ գույքի համապատասխան տեսակը: Եթե օտարվել է հողամաս և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույք, որոնք հաշվառված են մեկ համարի ներքո (տրված է մեկ սեփականության վկայական), բացվող ցանկից առանձին-առանձին ընտրվում են անշարժ գույքի համապատասխան տեսակները, իսկ **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում հողի և շինությունների մակերեսները նշվում են առանձին-առանձին:

– **«Անշարժ գույքի մակերեսը»** դաշտում մակերեսը լրացվում է բացառապես քառակուսի մետրերով: Հեկտարով կամ այլ չափման միավորով (այդ թվում՝ արտասահմանյան գույքի դեպքում) արտահայտված անշարժ գույքի մակերեսն անհրաժեշտ է վերածել քառակուսի մետրի և մակերեսը նշել քառակուսի մետրերով:

– «**Չափման միավոր**» դաշտում որպես կանոն ընտրվում է «մ²» չափման միավորը,

– **«Անշարժ գույքի հաշվառման համարը»** դաշտում լրացվում է սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը կամ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում՝ գույքի նույնականացման համապատասխան տվյալը,

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը,

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է անշարժ գույքի գտնվելու հասցեն:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում իրավաբանական անձի դեպքում լրացվում է տվյալ գույքի սեփականատիրոջ (սեփականատերերի) անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

5) **«Բ.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում հայտարարագրվում է հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված տրանսպորտի միջոցի): Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում առնվազն 90 օր վարել է ավտոմեքենա, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և ավտոմեքենան փոխանցել է օգտագործման հայտարարատուին:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն տրանսպորտի միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտի միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

6) **«Բ.2.1. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑԸ»** բաժնի՝

– **«Տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը: Հայտարարագրման ենթակա են միայն այն տրանսպորտային միջոցները, որոնք պետական լիազոր մարմնում հաշվառման ենթակա են,

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը,

– **«Ձեռքբերման տարին»** դաշտում նշվում է տրանսպորտային միջոցի ձեռքբերման տարին: Ձեռքբերման տարի է համարվում ՀՀ պետական լիազոր մարմնում տրանսպորտային միջոցի հաշվառման ամսաթիվը ներառող տարին:

– **«Մակնիշը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը,

– **«Սերիան»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան,
– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի,
– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

7) **«Բ.2.2. Հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակաշրջանում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոցը, այն տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ տրանսպորտային միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Հայտարարատուի տվյալները»** ենթաբաժնում նշվում է հայտարարատուի անունը, ազգանունը, հայրանունը:
– **«Տրանսպորտի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տրանսպորտի համապատասխան տեսակը:
– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:
– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:
– **«Մակնիշ»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը,
– **«Սերիա»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի սերիան,
– **«Թողարկման տարին»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի թողարկման տարին ըստ հաշվառման վկայագրի,
– **«Նույնականացման համարը (VIN)»** դաշտում լրացվում է տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը):

8) **«Բ.3. ԱՐԺԵԹՂԹԵՐ ԵՎ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների արժեքը պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ հաշվարկվում է ձեռքբերման արժեքով:
– Ներդրումային ֆոնդերի փայերը հայտարարագրվում են ընդհանուր կարգով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը չեն հայտարարագրվում:
– Հայտարարագրման ենթակա է նաև այն արժեթուղթը (բաժնեմասը), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով գրանցված է այլ անձի անունով, սակայն առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝
✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի անունից/օգտին, այսինքն՝ արժեթուղթը փաստացի ձեռք է բերվել հայտարարատու անձի համար: Հայտարարատու անձը չհանդիսանալով արժեթղթի սեփականատեր, այնուամենայնիվ ունի փաստացի հնարավորություն վերջինիս հետ կապված որոշումներ կայացնելու հարցում **կամ**

✓ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատուի հաշվին, այսինքն՝ արժեթուղթը ձեռք է բերվել հայտարարատու անձի դրամական կամ այլ գույքային միջոցներով, վերջինիս հաշվին **կամ**

✓ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն, այսինքն՝ թեև արժեթուղթը գրանցված է երրորդ անձի անունով, սակայն տվյալ արժեթղթից օգուտներ՝ շահաբաժնի կամ որևէ այլ ձևով, ստանում է հայտարարատու անձը **կամ**

✓ այդ արժեթուղթը փաստացի տնօրինում է հայտարարատուն, այսինքն՝ հայտարարատու անձը գույքի ճակատագիրը որոշելու հարցում ունի վճռորոշ ազդեցություն: Հայտարարատու անձի անմիջական ազդեցությամբ է արժեթղթի իրական սեփականատերը որոշում կայացնում այն վաճառելու, նվիելու և այլնի վերաբերյալ:

– Հայտարարատուի բաժնեմասնակցությամբ ընկերության գույքի, ինչպես նաև ընկերության դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները ենթակա չեն հայտարարագրման: Հայտարարագրման ենթակա չեն նաև այն կազմակերպության գույքի, ինչպես նաև դրա դուստր և կախյալ ընկերությունների վերաբերյալ տվյալները, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ կազմակերպությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

9) **«Բ.3.1. Բաժնային արժեթղթեր և այլ ներդրումներ»** բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ): «Այլ» տողն ընտրելու դեպքում հայտնված «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում նկարագրվում է այլ արժեթղթի տեսակը:

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է հանդիսանում հայտարարատուն, նրա ընտանիքի անչափահաս անդամը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

– **«Ձեռքբերման տարին»** դաշտում լրացվում է արժեթղթի ձեռքբերման տարին: Եթե տվյալ տարվա ընթացքում տվյալ ընկերության բաժնային արժեթղթեր կամ բաժնեմաս ձեռք է բերվել մեկից ավելի անգամ, ապա բոլոր ձեռքբերումները հայտարարագրվում են առանձին:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» եղանակն ընտրելու դեպքում «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է համապատասխան եղանակի նկարագրությունը:

– **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտը լրացվում է, եթե «Ձեռքբերման եղանակը» դաշտում ընտրվել է ձեռքբերման «Այլ» եղանակը,

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում գույքի օտարման գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում լրացվում են անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում՝ վերջինիս անվանումը, ինչպես նաև լրացվում է գործարքի մյուս կողմի հասցեն:

– **«Հայտարարատուի և գործարքի մյուս կողմի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատուին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ: Այս դաշտը տեղեկատվական բնույթ է կրում և պարտադիր լրացման դաշտ չէ:

10) **«Բ.3.2. Բաժնային արժեթուղթ կամ այլ ներդրում, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ արժեթղթից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Ընկերության լրիվ անվանումը»** դաշտում լրացվում է այն ընկերության լրիվ անվանումը, որի բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի սեփականատեր է հանդիսանում հայտարարատուն, նրա ընտանիքի անչափահաս անդամը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

– **«Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայաբաժին):

– **«Արժեքը»** դաշտում լրացվում է պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա բաժնային արժեթղթի կամ այլ ներդրման ձեռքբերման արժեքը: Ընկերության հիմնադրման դեպքում բաժնային արժեթղթի (բաժնեմասի) արժեքը նշվում է ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության (ներդրման) գումարի չափով:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է բաժնային արժեթղթի կամ բաժնեմասի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Բաժնեմասնակցության %»** դաշտում լրացվում է տվյալ ընկերությունում հայտարարատուին պատկանող բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի տոկոսն ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ:

– **«Բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բաժնային արժեթղթերի և այլ ներդրումների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

11) **«Բ.3.3. Պարտքային և այլ արժեթղթեր»** բաժնի՝

– **«Արժեթղթի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային կամ այլ արժեթղթի տեսակը: «Այլ արժեթուղթ» տողն ընտրելու դեպքում հայտնված «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում նկարագրվում է այլ պարտքային արժեթղթի տեսակը:

– **«Ձեռքբերման տարին»** դաշտում նշվում է արժեթղթի ձեռքբերման տարեթիվը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժեթղթի ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն»** դաշտում լրացվում են գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև գործարքի կողմի հասցեն:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա պարտքային և այլ արժեթղթերի արժեքը (գինը)»** և **«Արժույթը»** դաշտերում, համապատասխանաբար, լրացվում է արժեթղթերի ձեռքբերման արժեքը և արժույթը:

12) **«Բ.3.4. Պարտքային կամ այլ արժեթուղթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ արժեթղթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Արժեթղթի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է պարտքային և այլ արժեթղթերի տեսակը:

– **«Արժեքը (գինը)»** դաշտում լրացվում է պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ առկա պարտքային և այլ արժեթղթի ձեռքբերման արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է տվյալ արժեթղթի ձեռքբերման գործարքի արժույթը:

– **«Պարտքային և այլ արժեթղթերի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է պարտքային և այլ արժեթղթերի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

13) **«Բ.4. ՀԱՆՁՆՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Հայտարարագրվում են հայտարարատու անձի՝ պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի հանձնած փոխառությունները և ներդրված բանկային ավանդների գումարները: Սույն հավելված առումով բանկային ավանդ է համարվում բանկի հետ ժամկետային ավանդի պայմանագրի շրջանակներում որոշակի ժամկետով ներդրված ավանդը, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով սահմանված տոկոսներ:

– Ցպահանջ ավանդները, խնայողական հաշիվների մնացորդները, առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին արտացոլվում են «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում:

– Հայտարարագրվում է մինչև անշարժ գույքի պետական գրանցումը կառուցապատողին անշարժ գույքի գնման իրավունքի դիմաց վճարված գումարների մնացորդը (այդ թվում՝ վարկային միջոցներից) պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից հետո այս փոխառության մնացորդը մարվում է (զրոյանում է):

– Այս բաժնում լրացվում են նաև գույքի (անշարժ գույք, տրանսպորտի միջոց, արժեթղթեր և այլ ներդրումներ, թանկարժեք գույք) ձեռքբերման պայմանագրի շրջանակներում փաստացի վճարված կանխավճարի և նախավճարի գումարները, որոնք առկա են պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– Այս բաժնում հայտարարագրվում է այն փոխառությունը կամ ավանդը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ փոխառությունից կամ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

14) **«Բ.4.1. Հանձնված փոխառություններ»** բաժնի՝

– **«Փոխառության գումարը»** դաշտում լրացվում է պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Փոխառության արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված փոխառության արժույթը:

– **«Լրացուցիչ տեղեկություններ»** դաշտում նշվում են այն փոխառությունների տվյալները, որոնք վերաբերվում են գույքի նախնական առուվաճառքի պայմանագրերով փաստացի վճարված գումարներին կամ գույքի ձեռքբերման պայմանագրերի շրջանակներում հիփոթեքային պայմանագրերով փաստացի վճարված գումարներին, եթե հայտարարատուի սեփականության իրավունքը դեռևս չի գրանցվել:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է պարտատիրոջ և պարտապանի միջև կնքված պայմանագրում նշված տոկոսադրույքը,

– **«Պարտապանի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում են պարտապան հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Կողմերի միջև առկա կապի բնույթը»** դաշտում լրացվում է փոխատուի (պարտատիրոջ) և փոխառուի (պարտապանի) միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ ձեռքբերվող բնակարանի կառուցապատող, եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է երկիրը, որի քաղաքացի է հանդիսանում պարտապանը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է պարտապանի հասցեն:

15) **«Բ.4.2. Հանձնված կամ վերադարձված փոխառություն, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել**

հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ փոխառությունից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնի՝

– **«Տոկոսադրույքը»** դաշտում նշվում է պարտատիրոջ և պարտապանի միջև կնքված պայմանագրում նշված տոկոսադրույքը:

– **«Գումարը»** դաշտում լրացվում է պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ տրված փոխառության գումարի չմարված մնացորդը:

– **«Արժույթը»** դաշտում լրացվում է հանձնված փոխառության արժույթը:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

16) **«Բ.4.3. Բանկային ավանդներ»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Ավանդի գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Ավանդի արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

17) **«Բ.4.4. Բանկային ավանդ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ ավանդից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ տվյալ արժույթով ավանդ է ներդրվել (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Գումարը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի գումարը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Արժույթը»** դաշտում լրացվում է ներդրված ավանդի արժույթը:

– **«Երրորդ անձի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

18) **«Բ.5. ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ՀՀ ԴՐԱՄԻՑ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻՑ ԱՎԵԼԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԸ (ԹԱՆԿԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ)»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Թանկարժեք գույք է համարվում նախորդ բաժիններում չներառված՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը, օրինակ՝ թանկարժեք զարդ, կահույք, արվեստի գործ, ոսկու ձուլակտորներ և այլն: Ընդ որում, չորս միլիոն դրամի շեմը վերաբերվում է տվյալ թանկարժեք գույքի միավորին կամ կոմպլեկտին, այլ ոչ թե՝ թանկարժեք գույքի տեսակին: Օրինակ, եթե հայտարարատու անձի բոլոր ոսկյա զարդերի ընդհանուր արժեքը կազմում է 6 միլիոն ՀՀ դրամ, սակայն դրանցից յուրաքանչյուրի արժեքը չի գերազանցում 4 միլիոն ՀՀ դրամը, ոսկյա զարդերը ենթակա չեն հայտարարագրման:

– Թանկարժեք գույքի արժեքը որոշվում է դրա ձեռքբերման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում նկարագրված բնամթերային եկամուտների արժեքի որոշման մեթոդով:

– **Այս բաժնում հայտարարագրվում է** նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող թանկարժեք գույքը: Օրինակ՝ հայտարարատուն հաշվետու ժամանակահատվածում առնվազն 90 օր օգտագործել և (կամ) տիրապետել է թանկարժեք ժամացույց, որը պատկանում է իր մերձավոր ազգականին, ով երկրում չէ և այդ թանկարժեք գույքը փոխանցել է օգտագործման (տիրապետման) հայտարարատուին, կամ հայտարարատուի տանը կախված է հայտնի նկարչի թանկարժեք կտավ, որը պատկանում է այլ անձի:

– Հայտարարագրման ենթակա է նաև այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ թանկարժեք գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

19) **«Բ.5.1. Չորս միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքը (թանկարժեք գույք)»** բաժնի՝

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրություն»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման եղանակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է ձեռքբերման համապատասխան եղանակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է ձեռքբերման եղանակը:

– **«Ձեռքբերման տարի»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի ձեռքբերման տարին:

– **«Ձեռքբերման արժեքը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը՝ ձեռքբերման գնով: Նվիրատվություն և ժառանգություն ստանալու դեպքում այս դաշտը լրացվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» մասով սահմանված բնամթերային եկամուտների արժեքի որոշման դրույթներին համապատասխան:

– **«Ձեռքբերման արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի ձեռքբերման արժույթը:

20) **«Բ.5.2. Հայտարարատուի կողմից հաշվետու ժամանակաշրջանում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող թանկարժեք գույք կամ այն թանկարժեք գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Թանկարժեք գույքի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է թանկարժեք գույքի համապատասխան տեսակը:

– **«Նկարագրությունը»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի նկարագրությունը:

– **«Ձեռքբերման գինը (արժեքը)»** դաշտում լրացվում է թանկարժեք գույքի արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է թանկարժեք գույքի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

21) **«Բ.6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Սույն բաժնում հայտարարագրվում են հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի՝

- ՀՀ և արտասահմանյան բանկերում գտնվող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցները (ընթացիկ և խնայողական հաշիվների մնացորդները (բացառությամբ ժամկետային ավանդների), առարկայազուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին և այլն),
- Էլեկտրոնային հաշիվներին (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO) առկա դրամական միջոցները,
- կրիպտոարժույթը,
- կանխիկ դրամական միջոցները:

– ՀՀ բանկերում միևնույն արժույթով առկա դրամական միջոցները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի**

մնացորդը փոքր է 5 մլն դրամից» տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ հաշիվների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի դրամական միջոցների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց «Նկարագրություն» դաշտում պետք է նշի, թե տվյալ հաշվին որքան գումար է առկա:

– Այս բաժնում հայտարարագրվում է նաև [այն դրամական միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ դրամական միջոցից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:]

22) **«Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Գումարը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի՝ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

23) **«Բ.6.2. Բանկային հաշվի մնացորդ (բացառությամբ ավանդի), որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ դրանից փաստացի օգուտ է ստանում** կամ այն տնօրինում է **հայտարարատուն»** բաժնի՝

– **«Բանկի անվանումը»** դաշտում նշվում են այն բանկերը, որտեղ առկա են բանկային հաշիվների մնացորդներ (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Երկիրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է այն երկիրը, որտեղ գտնվում է տվյալ բանկը (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Քաղաքը»** դաշտում լրացվում է բանկի (մասնաճյուղի) գտնվելու քաղաքը (համայնքը) (լրացվում է ՀՀ տարածքից դուրս գտնվող բանկի դեպքում):

– **«Գումարը»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի՝ տվյալ արժույթով բոլոր բանկերում առկա դրամական միջոցները:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Բանկային հաշիվների մնացորդների սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է բանկային հաշիվների մնացորդների սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

24) **«Բ.6.3. Էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ»** բաժնի՝

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն):

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն «Դրամական միջոցի տեսակը» դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

25) **«Բ.6.4. Էլեկտրոնային հաշիվ կամ կրիպտոարժույթ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ հաշվից կամ կրիպտոարժույթից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն»** բաժնի՝

– **«Դրամական միջոցի տեսակը»** դաշտի բացվող ցանկից ընտրվում է «էլեկտրոնային հաշիվ» կամ «Կրիպտոարժույթ» տողը:

– **«Տեսակը»** դաշտում լրացվում է էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի տեսակը (ԻԴՐԱՄ, FOREX, PAYPAL, VIVARO կամ Bitcoin, Ethereum, TRON և այլն):

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի էլեկտրոնային հաշվի կամ կրիպտոարժույթի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտը բացվում է միայն «Դրամական միջոցի տեսակը» դաշտում «Էլեկտրոնային հաշիվ» տողն ընտրելու դեպքում: Բացվող ցանկից ընտրվում է էլեկտրոնային հաշվի արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Էլեկտրոնային հաշիվների և կրիպտոարժույթի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

26) **«Բ.6.5. Կանխիկ դրամ»** բաժնի՝

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

«Ծագման աղբյուրը» դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5**

մլն դրամից» տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

27) **«Բ.6.6. Կանխիկ դրամ, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին կամ այդ կանխիկ դրամից կամ ներդրումից փաստացի օգուտ է ստանում հայտարարատուն»** բաժնի՝

– **«Գումարը»** դաշտում նշվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի կանխիկ դրամի գումարի չափը:

– **«Արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է կանխիկ դրամի արժույթը:

– **«Ծագման աղբյուրը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է համապատասխան տողը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում **«**Նկարագրություն**»** դաշտում լրացվում է այլ ծագման աղբյուրի վերաբերյալ տեղեկություններ: «Ծագման աղբյուրը» դաշտում հայտարարատուի գնահատմամբ լրացվում է դրամական միջոցների ծագման հիմնական (ամենամեծ) աղբյուրը, եթե պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ տվյալ ենթաբաժնում հայտարարագրված դրամական միջոցների մնացորդը մեծ է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից: Եթե մնացորդը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից կամ դրան համարժեք այլ արժույթից, ապա այս դաշտում բացվող ցանկից ընտրվում է **«Դրամական միջոցի մնացորդը փոքր է 5 մլն դրամից»** տողը: Ծագման աղբյուր չի կարող հանդիսանալ խնայողությունը, այլ անհրաժեշտ է նշել ծագման առաջնային աղբյուրը:

– **«Կանխիկ դրամի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում նշվում է երրորդ անձ հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և երրորդ անձի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը, օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, գործընկեր և այլն:

28) **«Բ.7. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատուի անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի և այլ ներդրումների, հանձնված և վերադարձված փոխառությունների, բանկային ավանդների, թանկարժեք գույքի և դրամական միջոցների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

29) **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտները»** հայտարարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

– Այս բաժնում գրանցվում են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում հայտարարատու անձի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները:

– Եկամուտները հայտարարագրվում են առանց հարկերի և պարտադիր այլ վճարների:

– Եկամուտներն արտացոլվում են ըստ դրանց փաստացի ստացման՝ անկախ նրանից, թե որ ժամանակահատվածին են դրանք վերաբերվում: Ընդ որում, սույն

հայտարարագրի իմաստով եկամուտ են համարվում նաև ստացված վարկերն ու փոխառությունները, գույքի վաճառքից ստացված գումարը, բնամթերային եկամուտները, ապահովագրական հատուցումները, ինչպես նաև անուղղակի ստացված եկամուտները:

– Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում մեկ կամ մի քանի աղբյուրից ստացված տվյալ տեսակի եկամուտը կամ նույն տեսակի եկամուտների հանրագումարը (նվիրատվություն, շահում, քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտ և այլն), որի արժեքը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, բացառությամբ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների: Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները կարող են հայտարարագրվել նույն աղբյուրից ստացված աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների հետ՝ հանրագումարով:

– «Նվիրատվություն» կամ «ժառանգություն» եղանակով ձեռքբերված գույքը հայտարարագրվում է այս բաժնում՝ որպես եկամուտ:

– Հայտարարատուի բանկային հաշիվներին հասանելի չօգտագործված վարկային գծի և օվերդրաֆթի գումարները եկամուտ չեն համարվում, քանի դեռ չեն օգտագործվել: Որպես եկամուտ հայտարարագրվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարատուի վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարը:

– Կառուցվող շենքից հիփոթեքային վարկավորմամբ անշարժ գույքի գնման իրավունքի միջոցով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացը հայտարարագրվում է սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ»-ում նկարագրված կարգով:

– Բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հայտարարատուի կողմից ստացված հիփոթեքային վարկի սպասարկման համար ՀՀ Հարկային օրենսգրքի 160 հոդվածի համաձայն վերադարձվող եկամտային հարկի գումարները հայտարարագրում արտացոլվում են, եթե դրանք փաստացի ստացվել են հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում:

– Բանկային ավանդի տոկոսները հայտարարագրվում են ըստ փաստացի վճարման՝ անկախ նրանից՝ դրանք գումարվել են ավանդին, փոխանցվել են ընթացիկ որևէ հաշվին, թե կանխիկացվել են:

– Գործատուների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրվող փոխհատուցման վճարները (գործուղման ծախսերի հատուցման վճարները, դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները և այլն) չեն հայտարարագրվում որպես եկամուտ, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում տրվող չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

– Բանկային ավանդի դիմաց միևնույն բանկից միևնույն արժույթով ստացված տոկոսները կարող են հայտարարագրվել հանրագումարով:

– Տարաժամկետ վճարման պայմանով գույքի վաճառքի գործարքներում եկամուտ է համարվում գույքի վաճառքի ամբողջ գումարը, իսկ հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ գնորդից ստացման ենթակա գումարն արտացոլվում է «Հանձնած փոխառություններ» բաժնում որպես տրված փոխառություն:

– Բնամթերային եկամուտներն արտացոլվում են սույն հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնում սահմանված կարգով:

– Այլ անձի կամ անձանց հետ համատեղ ստացված եկամուտների առկայության դեպքում հայտարարատու անձը պետք է հայտարարագրի ստացված եկամուտների այն մասը, որն իր գնահատմամբ պատկանում է իրեն, բայց «Նկարագրություն» դաշտում պետք է նշի, թե ընդհանուր որքան եկամուտ է ստացվել:

30) **«Գ.1.1. Հաշվետու ժամանակահատվածի եկամուտները»** բաժնի դաշտերը լրացվում են հետևյալ կերպ՝

– **«Եկամտի տեսակը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի տեսակը: «Այլ» տարբերակը ընտրելու դեպքում «Նկարագրություն» դաշտում լրացվում է այլ եկամտի վերաբերյալ տեղեկություններ:

– **«Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը»** դաշտում լրացվում է իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը»** դաշտում նշվում է կողմերի միջև առկա կապի բնույթը: Օրինակ՝ եղբայր, ընկեր, հեռավոր ազգական, անծանոթ և այլն: Կողմերի միջև առկա կապի բնույթը պարտադիր է նկարագրել, եթե եկամուտ վճարողը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, հակառակ դեպքում այս դաշտում կարող է նշվել գծիկ՝ «-»: Աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում այս դաշտում կարող է լրացվել նաև **«Գործատու»**, ստացված վարկերի դեպքում՝ **«Բանկի հաճախորդ»** և այլն:

– **«Եկամտի չափը (գումարը)»** դաշտում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնի ստանձնման/դադարեցման օրն ընկած ժամանակահատվածում հայտարարատուի փաստացի ստացված եկամտի չափը: Բնամթերային եկամուտների դեպքում այս դաշտում լրացվում է «0»:

– **«Եկամտի արժույթը»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամտի արժույթը:

– **«Բնամթերային ձևով ստացված եկամտի արժեքը»** դաշտում նշվում է բնամթերքով ստացված եկամտի չափը: Պայմանագրով չկարգավորվելու դեպքում բնամթերային եկամուտներն արտացոլվում են ստացման տարում այն ձեռք բերելու հնարավոր գնով: Հնարավոր կամ շուկայական գին է համարվում այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար կամ այն գինը, որով գույքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը համաձայն է վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը համաձայն է ձեռք բերել այդ գույքը:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է եկամուտը վճարողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է եկամուտ վճարողի հասցեն:

31) **«Գ.1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ»** բաժնի՝

– **«Վարկատուի կամ փոխատուի անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը»** դաշտում լրացվում է վարկատու կամ փոխատու իրավաբանական անձի անվանումը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է տրվող վարկի կամ փոխառության արժույթը:

– **«Փոխառության մնացորդի չափը»** դաշտում նշվում է փոխառության մնացորդի չափը պաշտոնական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Փոխառության տոկոսադրույքը»** դաշտում նշվում է փոխառուի և փոխատուի միջև կնքված պայմանագրում կամ համաձայնագրում նշված տոկոսադրույքը:

– **«Փոխառության նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է ստացված փոխառության նպատակը:

– **«Վարկի մայր գումարի մնացորդի չափը»** դաշտում նշվում է վարկի մայր գումարի մնացորդի չափը պաշտոնական պարտականություններն ստանձնելու/դադարեցնելու օրվա դրությամբ:

– **«Վարկի նպատակային նշանակությունը»** դաշտում նշվում է, թե ինչ նպատակով է ստացվել վարկը (սպառողական վարկ, հիփոթեքային վարկ, լոմբարդային վարկ, գյուղատնտեսական վարկ և այլն),

– **«Հիփոթեքի առարկան»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի տեսակը՝ հողամաս, անհատական բնակելի տուն, բնակարան, շենք և շինություններ և այլն:

– **«Հիփոթեքի առարկայի գտնվելու վայրը»** դաշտում նշվում է հիփոթեքի առարկա հանդիսացող անշարժ գույքի գտնվելու հասցեն:

– **«Երկիր»** դաշտում բացվող ցանկից ընտրվում է վարկը կամ փոխառությունը տվողի երկիրը:

– **«Մարզ», «Համայնք», «Փողոց», «Շինության տիպ», «Շենք/Տուն», «Բնակարան»** դաշտերում համապատասխանաբար լրացվում է վարկը կամ փոխառությունը տվողի հասցեն:

32) **«Գ.2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** բաժնում լրացվում են հայտարարատուի եկամուտների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք չեն լրացվել համապատասխան բաժիններում:

33) **«Դ. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ԾԱԽՍԵՐԸ»** բաժինը լրացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

– Դ.1.-Դ.6. բաժիններում հայտարարագրման ենթակա են հաշվետու ժամանակահատվածի այն ծախսերը, որոնց միանվագ արժեքը գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 2 մլն-ի շեմ) կամ տվյալ տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է 3 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը (այսուհետ՝ 3 մլն-ի շեմ): Նշված 6 տեսակի ծախսերից յուրաքանչյուր տեսակի համար 3 մլն-ի շեմը կիրառվում է առանձին: Օրինակ, եթե անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը (դիզայն, սալիկապատում, ներկում և այլն) առանձին-առանձին չեն գերազանցում 2 մլն-ի շեմը, սակայն դրանց հանրագումարը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 3 մլն-ի շեմը, ապա այդ ծախսերը ենթակա են հայտարարագրման:

– Դ.7.-Դ.8. բաժիններում հայտարարագրման ենթակա է Դ.1.-Դ.6. բաժիններում չնշված ցանկացած ծախս, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցել է 2 մլն-ի շեմը: Ընդ որում, գնման տվյալ առարկայի (ապրանքի, ծառայության) դիմաց կատարվող վճարումն արհեստականորեն տրոհելը մեկից ավելի վճարումների չի ազատում տվյալ ծախսի հայտարարագրման պարտավորությունից:

– Վերը նշված շեմերից փոքր արժեքով ծախսերի հայտարարագրումը չի համարվում սույն ուղեցույցի կամ հայտարարագրի լրացման կարգի խախտում:

– Եթե հայտարարատու անձը մարում է համապատասխան շեմերը գերազանցող այլ անձանց պարտավորությունները (ուսման վարձ, վարկ, անշարժ գույքի վարձ և այլն), տվյալ գործարքը սույն ուղեցույցի իմաստով համարվում է այլ անձանց տրված նվիրատվություն և ենթակա է հայտարարագրման «Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բաժնում, բացառությամբ ի շահ հայտարարատուի ամուսնու և անչափահաս զավակների կատարվող ծախսերի, որոնք հայտարարագրվում են Դ.1.-Դ.6. բաժիններում:

– Եթե նույն տեսակի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կատարվել են տարբեր արժույթներով, ապա հարկավոր է նշել ծախսի մոտավոր չափը կա՛մ արտարժույթով, կա՛մ ՀՀ դրամով: Օրինակ, եթե հանգստի համար կատարած ճանապարհածախսը կատարվել է ՀՀ դրամով, իսկ կեցության ծախսը՝ ԱՄՆ դոլարով, ապա ընդհանուր ծախսը պետք է ներկայացնել կա՛մ ՀՀ դրամով, կա՛մ ԱՄՆ դոլարով:

– Տարվա ընթացքում կատարված ծախսի հստակ արժեքը ներկայացնելու անհնարինության դեպքում, հայտարարատու անձը պետք է ներկայացնի կատարված ծախսի մոտավոր արժեքը:

– Պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրում ծախսերի վերաբերյալ տվյալներ չեն հայտարարագրվում: Պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրը կատարած ծախսերը:

– Վարկային գծի և օվերդրաֆթի մարումները կարող են չհայտարարագրվել որպես ծախս, սակայն որպես տվյալ հաշվետու ժամանակահատվածի եկամուտ հայտարարագրվում են պաշտոնի ստանձնման/դադարեցման օրվա դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի օգտագործված և չմարված գումարները: Միևնույն ժամանակ, տարեվերջի դրությամբ վարկային գծի և օվերդրաֆթի մայր գումարների չմարված մնացորդը պետք է արտացոլվի «**Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ**» բաժնում:

34) **«Դ.1. Հանգստի համար կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացվեն հանգստի մեկնելու ուղղությունը (ուղղությունները) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում հանգստի համար կատարված ճանապարհածախսի և կեցության ծախսի ընդհանուր արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է կատարված ծախսի արժույթը:

35) **«Դ.2. Շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճար»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարձակալված շարժական կամ անշարժ գույքի օբյեկտը: Հանգստի համար վարձակալված շարժական կամ անշարժ գույքը հայտարարագրվում է **«Դ.1. Հանգստի համար**

կատարած ճանապարհածախս (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախս» բաժնում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարների համար կատարված ծախսի արժույթը:

36) **«Դ.3. Ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճար»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում են կրթական հաստատության տվյալները կամ այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող գումարների ընդհանուր չափը: Արտասահմանում կամ բնակության վայրից դուրս ուսումնառության ընթացքում կեցության համար կատարվող ծախսը, ճանապարհածախսը և այլ ծախսերը չեն համարվում ուսման վճարներ և ենթակա են հայտարարագրման միայն 2 մլն-ի շեմը գերազանցելու դեպքում՝ **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնում**:**

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող ծախսի արժույթը:

37) **«Դ.4. Գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսեր»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է ներկայացնել տարվա ընթացքում գյուղատնտեսական գործունեության հետ կապված բոլոր ծախսերի բնույթը (հողերի վար, ցանք, ոռոգում, աշխատուժի վարձակալում, կենդանիների ձեռքբերում և այլն) և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են ծախսի բնույթը հասկանալու համար:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերի ընդհանուր չափը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսի արժույթը:

38) **«Դ.5. Վարկի մարմանն ուղղված վճարումներ»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում ներկայացվում է վարկի նպատակը: Եթե հայտարարատուի վարկի մարումը կատարվում է այլ անձանց կողմից, անհրաժեշտ է նշել, թե ինչ նպատակով է վարկը մարում այլ անձը (երաշխավորություն, օգնություն և այլն), ինչպես նաև՝ կապը տվյալ անձի հետ:

Յուրաքանչյուր վարկատեսակ (սպառողական, հիփոթեքային և այլն) կարող է լրացվել առանձին տողով, սակայն 3 մլն-ի շեմը կիրառվում է տվյալ հաշվետու ժամանակահատվածում բոլոր վարկերի մարմանն ուղղված վճարումների հանրագումարի նկատմամբ, այդ թվում՝ մայր գումար, տոկոսներ, տույժեր, տուգանքներ, սպասարկման վճարներ, կոմիսիոն վճարներ և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածի ընթացքում վճարված վարկի մայր գումարի, տոկոսագումարի, այլ վճարների (հայտի ուսումնասիրություն, սպասարկում, գրավի գնահատում և այլն), տույժերի, տուգանքների ընդհանուր գումարը: Հայտարարատուի՝ այլ անձանց կողմից մարված վարկերը պետք է հայտարարագրել նաև **«Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտներ»** բաժնում՝ որպես անուղղակի ստացած եկամուտ:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է վարկի մարման համար կատարված ծախսի արժույթը: Տարբեր արժույթներով վարկերի դեպքում մարման համար կատարված ծախսերը պետք է ներկայացնել տվյալ արժույթով:

39) **«Դ.6. Անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսեր»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում պետք է հայտարարագրվեն անշարժ գույքի ընթացիկ և կապիտալ վերանորոգման համար կատարված ծախսերը (լոգարանի, խոհանոցի, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի համակարգերի վերանորոգումը, կենցաղային կոմունալ ջրամատակարարման, ջեռուցման կամ օդափոխման համակարգերի տեղադրումը կամ նորացումը, հերմետիկ և ջերմամեկուսիչ պատուհանների տեղադրումը, սեյսմակայունության ամրապնդումը, բնակելի տան բակային տարածքի հարդարումը (կանաչապատ տարածքի կառուցում, ասֆալտապատման աշխատանքներ և այլն) և այլն), այդ թվում՝ փաստաթղթերով չհիմնավորված:

Անշարժ գույքի կառուցման հետ կապված ծախսերը այս բաժնում չեն ներառվում:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում նշվում է տվյալ տարվա ընթացքում անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերի ընդհանուր արժեքը:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսի արժույթը:

40) **«Դ.7. Նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում են այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են գործարքի էությունը ներկայացնելու համար (նվիրատվության կամ օգնության նպատակը, ստացողը, հայտարարատուի կապը նրա հետ և այլն):

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում հայտարարագրվում են նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի արժեքը, այդ թվում՝ դրամական միջոցները, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Սույն բաժնում չեն ներառվում հայտարարագրման ենթակա անշարժ և շարժական գույքերը, բացառությամբ՝ դրամական միջոցների:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է նվիրատվության կամ օգնության կարգով տրված գույքի գումարի (արժեքի) արժույթը:

41) **«Դ.8. 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսեր»** բաժնի՝

– **«Ծախսի բովանդակությունը»** դաշտում նշվում է հաշվետու ժամանակահատվածում 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ ծախսերի բնույթը, օրինակ՝ առողջության վերականգնման համար կատարված ծախսեր, ընտանեկան խնջույքների կազմակերպման ծախսեր և այլն:

– **«Ծախսի չափը (գումարը)»** դաշտում հայտարարագրվում են 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի գումարը, որոնք ներկայացված չեն Դ.1.-Դ.7. բաժիններում:

– **«Արժույթը»** դաշտում ընտրվում է 2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ միանվագ ծախսերի արժույթը:

42) **«Դ.9. Լրացուցիչ տեղեկություններ»** բաժնում լրացվում են հայտարարատուի ծախսերի վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք հայտարարատուն նպատակահարմար է գտնում ներկայացնել՝ հայտարարագրված ծախսերի վերաբերյալ տեղեկություններն ամբողջացնելու համար»: